Նոյեմբերյանի սահմանամերձ Բաղանիս գյուղում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 50 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի շենք է կառուցում: Ադրբեջանի հենակետերից պաշտպանելու համար երկար, բարձր պատ էլ են կառուցել: Եթե Ադրբեջանի հետ խաղաղություն է, ինչ կարիք կար նման բարձր պատ կառուցելու:

Կարդացեք՝ էջ 4

Ամեն ինչ ոչնչացրեց, վերացրեց, քանդեց. պատերազմ, մահ, հայրենազրկում: Գիտություն, մշակույթ, ստեղծագործ աշխատանք՝ բոլորը փախան երկրից, ուժայիններին դարձրեց ձեռնասուն կուռկուռի ձագ, դռները բոլոր կողմերից բացեց ասպատակությունների առաջ: Մենք, սակայն, Նիկոլ ընտրեցինք: Դեբիլ էինք, թե հայի բախտ ունեինք:

Կարդացեք՝ էջ 5

«Արամայիս եւ Ռոզա Անտոնյաններ՝ ընտրողներ կամ ցուցակում»: «Բանակցելուց» հետո բացեց ցուցակը՝ ցույց տվեց: Այո՛, անունները կային: Արամայիս Անտոնյանն իմ հայրն է, որը մահացել է 26 տարի առաջ: Ռոզա Անտոնյանն իմ մայրն է, որը մահացել է 7 տարի առաջ: Երկուսն էլ շարունակում էին «ապրել» ընտրացուցակում:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 91 (4226), 9 հունիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Կիրակի օրը տեղի ունեցած ընտրություններից հետո ամենատրագիկ փաստը թերեւս ԲՀԿ-ի՝ խորհրդարան չանցնելն է, որին ընդամենը մոտ 60 ձայն պակասեց: Ի դեպ, 2021-ի ընտրություններում էլ մոտ 1800 ձայն էր պակասել ԲՀԿ-ին՝ շեմը հաղթահարելու համար: Սակայն այս անգամ ԲՀԿ-ի անցնել-չանցնելու փաստն առավել առանցքային նշանակություն ունի ՔՊ-ի համար: Բանն այն է, որ 49 տոկոս քվե ստացած ՔՊ-ն կկարողանա սահմանադրական մեծամասնություն ստանալ, եթե ԲՀԿ-ն չանցնի, եւ նրան տրված քվեները փոշիանան ու բաժին հասնեն ՔՊ-ին: Այստեղ է թաքնված ԲՀԿ-ի վերաբերյալ հրապարակվող հակասական արդյունքների գաղտնիքը: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ իրականում Գագիկ Ծառուկյանի առաջնորդած ուժը հաղթահարել է անցողիկ շեմը, սակայն իշխանական շրջանակից նրան գործարք են առաջարկել, որ կմտնի խորհրդարան, եթե համաձայնի դառնալ Փաշինյանի գրպանային ընդդիմությունը եւ հարկ եղած դեպքում 3/5 մեծամասնություն ապահովի նրա համար, օրինակ՝ սահմանադրական կարեւորագույն մարմինների ղեկավարների եւ անդամների ընտրության ժամանակ: ՔՊ-ն ԲՀԿ-ի անցնելու դեպքում զրկվում է այդ հնարավորությունից՝ նրան 2 ձայն է պակասում: Սակայն Ծառուկյանը մերժել է առաջարկը, ինչից հետո ԿԸՀ-ն հայտարարել է, որ ԲՀԿ-ն չի հաղթահարում անցողիկ շեմը: Ավելի ուշ ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանն ակնարկեց «տարատեսակ թվաբանական աճպարարությունների» մասին:

ՔՊ-ի՝ սահմանադրական մեծամասնություն չստանալու փաստն ուրախությամբ են ընդունել նաեւ ՔՊ-ի ծպտյալ ռուսամետները եւ գործարար խավը, քանի որ, նրանց կարծիքով՝ Նիկոլ Փաշինյանը դրանով հնարավորություն է ստանում իրեն Ռուսաստանի դեմ քայլերի մղող Արեւմուտքի առջեւ մանեւրելու, նրա պարտադրանքին չենթարկվելու եւ կարող է առաջիկայում էլ ժամանակ ձգել ու Ռուսաստանի դեմ ակտիվ գործողությունների չգնալ: Ասենք, ԵԱՏՄ-ից դուրս չգալ, 102-րդ ռազմաբազայից չհրաժարվել եւ այլն, ինչի մասին երեկ, ի դեպ, ակնարկներ կային եվրոպացիների շնորհավորական ուղերձներում, որոնք իրենց համարում են Փաշինյանի այս հաղթանակի լիիրավ փայատեր եւ փորձելու են ավելի կոշտ քայլերի դրդել նրան՝ Ռուսաստանի դեմ: Չունենալով սահմանադրական մեծամասնություն եւ խորհրդարանում ունենալով ռուսամետ, գոնե՝ Ռուսաստանի հետ բնականոն հարաբերություններ կառուցելու կողմնակից ընդդիմություն, Փաշինյանը, ըստ մեր զրուցակցի, կարող է մանեւրել եւ չկատարել Եվրոպայից եկող վտանգավոր հրահանգները:

Ինչու եւ ինչպես եղավ

Մեզ չհաջողվեց ո՛չ Վրաստանի Բիձինա Իվանիշվիլու, ո՛չ Հունգարիայի Օրբանի էֆեկտն ապահովել՝ 80 տոկոս քվեով մերժել 6 տարի կառավարած եւ մեր երկիրը որբի գլխի նման խուզած Նիկոլ Փաշինյանին: Բայց արձանագրենք, որ Փաշինյանին էլ չհաջողվեց Հայաստանը Մոլդովա ու դեռ չի հաջողվել Ուկրաինա դարձնել: Որքան էլ զարմանանք ու դժգոհենք հայ ընտրողից, թե ինչպես գնաց ու նման լեքսիկոնով, մեզ այսքան վնաս պատճառած, այսքան քաղաքական հետապնդումներ ու ապօրինություններ արած մարդուն ընտրեց, պետք է փորձենք հասկանալ՝ ինչպես եղավ եւ ինչու: Նախ, եկեք արձանագրենք, որ շարքային մարդուն մենմենակ ենք թողել պետական մեքենայի ու անկառավարելի դարձած պետական, համայնքային պաշտոնյաների առաջ: Եթե առաջ դեռ օրենքն ինչ-որ չափով գործում էր՝ մարդուն կոպտորեն ու առանց հիմքի աշխատանքից ազատել կամ բանտ նստեցնել չէին կարող, ապա հիմա նման արգելքներ այլեւս չկան՝ ցանկացած մեկին կարող են առանց որեւէ պատճառաբանության աշխատանքից ազատել, քրեական գործ հարուցել: Եթե գոնե երկրում գործեր դատական համակարգը՝ դատավորներն անմեղ մարդկանց կալանքի սանկցիաներ չտային, կամ՝ Մարդու իրավունքների գրասենյակը՝ ՄԻՊ-ը պաշտպաներ հանիրավի աշխատանքից ազատված մարդկանց, կամ՝ իրավապաշտպանների այն մեծ բանակը գործեր, որը գործում էր նախկին իշխանությունների օրոք, մարդիկ կարող էին դիմել այս կառույցների պաշտպանությանը եւ հույս փայփայել, որ իրենց իրավունքները չեն ոտնահարվի: Հիմա նրանց պաշտպանը մնացել են միայն մեդիան եւ ընդդիմությունը: Առաջինը լուսաբանելուց բացի այլ լծակներ չունի, երկրորդը դանդաղաշարժ է եւ անհատ անձանց պաշտպանությամբ գրեթե չի զբաղվում: Արդյունքում ունենք անպաշտպան ընտրող, որը նախընտրում է կարմիր գծեր չունեցող իշխանության դեմ դուրս չգալ:

Դեռեւս անցած ուրբաթ օրը մեզ տեղեկություններ հասան, որ ոստիկանության նորաստեղծ գվարդիային «համար 1» պատրաստություն է հայտարարվել, ասվել է, որ հարկ եղած դեպքում պետք է փակել մարզերից Երեւան մտնող ճանապարհները, թույլ չտալ, որ մարդիկ գան մայրաքաղաք: Ըստ ամենայնի, Նիկոլ Փաշինյանը նախապես ծրագրել է իր «սեւ գործը» եւ կանխատեսել, որ ընդդիմությունն իր էլեկտորատին փողոցային պայքարի կկանչի՝ տեսնելով ընտրակեղծիքները: Սակայն երեկ՝ մինչեւ երեկո ընդդիմադիրները քննարկումների մեջ էին եւ անգամ խուսափում էին գնահատականներ տալ ընտրությունների մասին՝ գոնե հայտարարել, որ չեն ճանաչում դրանց արդյունքները:

ՊԱՐՏՎԱԾ 3 ՈՒԺ 5 ՏԱՐԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՓՈՂ ԿՍՏԱՆԱ

ԱԺ ընտրություններում կուսակցությունները պայքարում են ոչ միայն խորհրդարանում տեղ զբաղեցնելու համար, այլեւ ընտրողների ձայների քանակից է կախված նրանց հետագա գործունեությունը: Բանն այն է, որ եթե կուսակցությունը հաղթահարում է 2%-ը, դաշինքը՝ 4%-ը, պետությունը նրանց վերադարձնում է իրենց վճարած ընտրագրավը: Բացի դրանից, այդ քաղաքական ուժերն առաջիկա հինգ տարիների համար պետությունից ստանում են ֆինանսավորում՝ մինչեւ հաջորդ ԱԺ ընտրությունները: Ըստ օրենքի՝ կուսակցությունն այսկերպ թուլացնում է կախվածությունը մասնավոր եւ բիզնես շահերից, ինչպես նաեւ՝ իր գործունեությունը շարունակելու հնարավորություն է ստանում: Ստացած գումարի չափը կախված է արդյունքներից՝ յուրաքանչյուր քվեի համար ստանում է տարեկան 1000 դրամ: 2 տոկոսի շեմը հաղթահարել, բայց ԱԺ մանդատ չեն ստացել Հայաստանի շնորհապետական, «Միասնության թեւեր» եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները: Ընդ որում, ԲՀԿ-ին խորհրդարան անցնելու համար պակասում է 62 ձայն (սա վերջնական արդյունքը չէ, ձայների վերահաշվարկ տեղի չի ունեցել): Այսպես՝ Հայաստանի շնորհապետական կուսակցությունը ստացել է 30 հազար 797 քվե կամ ձայների 2.11 տոկոսը եւ 5 տարի շարունակ բյուջեից ստանալու է 30 մլն 797 հազար դրամ: «Միասնության թեւեր»-ը ստացել է 33 հազար 618 ձայն կամ 2.3 տոկոս եւ, ըստ այդմ՝ 5 տարի շարունակ ստանալու է 33 մլն 618 հազար դրամ: ԲՀԿ-ն հավաքել է 58 հազար 368 ձայն եւ համապատասխանաբար ստանալու է տարեկան 58 մլն 368 հազար դրամ: Նշենք, որ այս աջակցությունը ստանալու են նաեւ խորհրդարան անցած ուժերը՝ հաշվարկի նույն տրամաբանությամբ, այսինքն՝ շատ ավելի մեծ գումարներ:

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՔՎԵ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը բազմիցս, այդ թվում՝ խորհրդարանական վերջին ընտրությունների նախաշեմին հայտարարել եւ խոստացել էր անցկացնել բացառապես ազատ, արդար եւ թափանցիկ ընտրություններ՝ դրանք որակելով որպես ժողովրդավարության աներկբա հիմք եւ «հեղափոխություն»: Բայց ո՞վ կհավատա Նիկոլին, որն ընտրա-

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

խախտումների մեկնարկը տվողներից է:

Քվեարկության ժամանակ նա, տեսախցիկներից չամաչելով, ծրարը քվեատուփի մեջ գցելիս ձեռքով ՔՊ-ի էժանագին քարոզչական սրտիկը ցույց տվեց՝ խախտելով ընտրության օրը քարոզչության արգելքը:

Հետո արդեն ընտրախախտումների հեղեղ սկսվեց: Մարզերից տեղեկատվություն էր գալիս՝ տեղամասերում կուտակումների, ցուցակներում մարդկանց՝ իրենց անունը չգտնելու, բաց քվեարկությունների, երբ համայնքապետերը կանգնում են ընտրողների կողքին ու հետեւում, թե ով ում է ընտրում, գրանցման հասցեներում անծանոթ անուններ հայտնաբերելու մասին: Սրանք Աժ ընտրություն-2026-ի ամենասովորական խախտումներն էին, կլասիկան: Արտառոց դեպքերն էլ կային:

Հովհաննես Սահակյանն ընտանիքով Մոսկվայից եկել էր Երեւան, ինչպես նրա ընկերը՝ քաղաքագետ Հրանտ Մելիք-Շահնազարյանն է պնդում՝ մայրիկի ծննդյան օրը շնորհավորելու: Օդանավակայանում նա դժբախտություն է ունեցել լրագրողի հարցերին պատասխանելու՝ ասելով, որ ընտրություններին մասնակցելու է եկել: «Եկել ենք ընտրենք, երեկոյան յոթին հետ ենք վերադառնում: Էրեխեքի հետ ենք, չմնանք բարդություններին...»,- ասել է նա: Բայց երեկոյան 10-11-ի հատվածում օդանավակայանում անձնագրային հսկողություն անցնելու ժամանակ նրան ձերբակալել են: Թե որն է մարդու մեղքը, հասկանալի չէ: «ՀՀ քննչական կոմիտեում ստացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման համաձայն՝ Հ. Ս.-ն, հաստատապես տեղյակ լինելով նախապատրաստվող հանցագործության մասին, չի հայտնել ՀՀ իրավասու մարմիններին: Հաղորդման առթիվ ՀՀ քննչական կոմիտեի՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 473-րդ հոդվածի 1-ին մասով (հանցագործության մասին չհայտնելը)»,- ասված է ՔԿ հաղորդագրության մեջ: Ենթադրվում է, որ իմանալ չհայտնելը վերաբերում է «չմնան բարդություններին» արտահայտությանը: Այսինքն՝ ՔԿ այլասերված մտածողությամբ, մարդը տեղյակ է եղել կազմակերպվելիք խժդժությունների մասին, բայց չի հայտնել: Այն, որ խժդժություններ-ը, հետընտրական զարգացումները հնարավոր են, ցանկացած անձ կարող էր ենթադրել: Բայց խժդժություններ անգամ չեղան: Մարդն անգամ եթե եկել է քվեարկելու, դրանում ո՞րն է հանցանքը: Իսկ հայ հանրության նիկոլական, մոլի ռուսաֆոբ հատվածը հարձակվել էր Հովհաննես Սահակյանի վրա, վերջին հայհոյանքներն էր գրում, չարախնդում, թե լավ են արել, որ բռնել են:

Փաշինյանի կողմնակիցների հետ, որոնք ուղիղ եթերում ընտրական իրավունքի կոպտագույն խախտումներ են թույլ տալիս, այսպես չեն վարվում: Օրինակ, Սիսիանի Լոր գյուղի դեպքով որեւէ վարույթ չկա: Այս անգամ քվեատուփերի մոտ չկային աղբամաններ, հանձնաժողովների անդամները գրեթե բոլոր ընտրատեղամասերում հորդորում էին քաղաքացիներին՝ քվեախցում թողնել չքվեարկված քվեաթերթիկները: Թե ինչու, պարզ դարձավ այն ժամանակ, երբ Սիսիանի Լորի քվեախցիկից Սիսիանի տարածքային ԸՀ նախագահ՝ ՔՊ-ական Արմինե Անդրանիկյանն ամուսնու՝ Սիսիանի համայնքապետարանի կոմունալի պետ Դավիթ Մարգարյանի հետ հավաքել էր չքվեարկած թերթիկները եւ պարկով փորձել էր դուրս տանել՝ երեւի զեկուցելու, թե քանի ձայն է ստացել ՔՊ-ն այդ գյուղում: Դիտորդներն ու լրագրողները կանխել էին նրա գործողությունները, եւ փոխանակ ներողություն խնդրելու, ՔՊ-ականը սպառնացել էր ոստիկանություն կանչել: Բղավել էր մարդկանց վրա, սպառնացել, հորդորել ցածր խոսել, որ քաղաքացիները չլսեն:

«Այս դեպքով որեւէ ընթացք չկա»,- հայտնում է իրավապահ մարմնի մեր աղբյուրը: Իսկ ՔԿ խոսնակն ասում է. «Նման հաղորդում չենք ստացել»: Վարույթ չկա նաեւ Մեղրիի զորամասի Ագարակի ընտրատեղամասում տեղի ունեցած գիշերային քվեարկության վերաբերյալ: Ինչպես հայտնի է, Ագարակում 35/65 ԸՏ-ն փակվելուց հետո 480 զինվոր են բերել քվեարկության: Քննչական կոմիտեի խոսնակը հայտնում է, որ այս դեպքի կապակցությամբ էլ որեւէ հաղորդում չի ստացվել, չնայած դեպքը նկարահանվել է: «Ականատեսի» դիտորդներն էին այն արձանագրել եւ նյութերը փոխանցել իրավապահ մարմիններին: Փաստորեն, ո՞չ զորամասի ղեկավարությունը, ո՞չ էլ ԸԸՀ նախագահն ու անդամները, որոնք տեղի են տվել հանցագործ հրամանատարներին եւ թույլատրել զինվորականներին՝ քվեարկել տեղամասը փակվելուց հետո, պատասխանատվություն չեն կրի:

ԿԻՐԱՆՑՈՒՄ ՔՊ-Ն ՉԻ ՀԱՂԹԵԼ՝ ՔՎԵԱՐԿԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԸ

Երեկ, ուշ երեկոյան հանրությունը հատկապես զարմացավ այն փաստից, որ սահմանամերձ գյուղերում պատերազմի խորհրդանիշ ու հողեր հանձնելու մեծ վարպետ ՔՊ-ն ընտրությունների արդյունքներով առաջատար դիրքերում է: Մասնավորապես հանրության ուշադրության կենտրոնում հայտնվեցին Տավուշի Կիրանց եւ Սյունիքի Ներքին Հանդ գյուղերը: Գաղտնիք չէ, որ Նիկոլ Փաշինյանի թեթեւ ձեռքով Կիրանցից տարածքներ են հանձնվել Ադրբեջանին, անգամ բնակելի որոշ տներ անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչի արդյունքում որոշ կիրանցեցիներ լքել են իրենց պատկանող տներն ու պետության կողմից տրամադրված միջոցներով այլ տներ են կառուցում, իսկ ադրբեջանական դրոշները հայտնվել են մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա: Դե իսկ Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղում Ադրբեջանն այնքան առաջխաղացում է ունեցել, որ տեղի բնակչությունն անգամ չի կարողանում այցելել գյուղի գերեզմանատուն կամ մահացողներին հուղարկավորել պապենական գերեզմանատանը, քանի որ այն գտնվում է ադրբեջանական զինուժի տնօրինության տակ, եւ ամեն վայրկյան հայատյաց ադրբեջանցիները կարող են կրակել կամ պատանդ վերցնել հայկական բնակչությանը:

Կիրանցեցի **Անդրանիկ Նազարյանը** «Հրապարակի» հետ զրույցում պատմեց, որ Կիրանցի բնակիչների մեծամասնությունը չի քվեարկել Նիկոլ Փաշինյանի օգտին, Կիրանցում Փաշինյանին օգնության են հասել սահմանապահ զորքերի ներկայացուցիչները եւ ինչ-որ մարդիկ, ովքեր գրանցված են Կիրանցում, սակայն չեն ապրում այնտեղ, իսկ նրանցից ոմանք անգամ Կիրանցի տեղն էլ չգիտեին՝ նախքան ընտրության օրը: «Նախ ասեմ, որ Նիկոլ Փաշինյանի մոտ ստացվել է որոշներին կաշառել ինչ-որ տներ կառուցելու ծրագրերով, թոշակի բարձրացմամբ եւ այլն, սակայն Կիրանցում քվեարկած մի շարք ընտրողներ ոչ մի կապ չունեն Կիրանցի հետ: Կիրանցում ընտրություններին մասնակցել են սահմանապահ զորքերի ներկայացուցիչները եւ այնպիսի մարդիկ, ովքեր գրանցված են Կիրանցում, սակայն ապրում են այլ վայրերում, օրինակ՝ Իջեւանում եւ այլն: Իմ ունեցած տեղեկություններով՝ մոտ 60 սահմանապահ զորքերի ներկայացուցիչ է Կիրանցում քվեարկել՝ լրացուցիչ ցուցակով: Եթե քվեարկությանը մասնակցածներից 60-ը սահմանապահներն են, 40-50-ը՝ այլ տեղերում ապրող մարդիկ, էլ ինչպե՞ս է ստացվում, որ Կիրանցն ընտրել է իրենց: Իհարկե, Կիրանցում Նիկոլով հիացած մի քանիսը կան, այնպես չէ, որ ընդհանրապես չկան, բայց նրանք հաստատապես մեծամասնություն չեն կազմում»,- մեզ պատմեց Անդրանիկ Նազարյանը: Իշխանությունները եւ նրանց ծառայող Գեղամ Նազարյանը, որը ծնունդով Կիրանցից է, հիացած են այն հանգամանքով, որ Կիրանցը ՔՊ է ընտրել, որ գնահատել է իրենց բերած «խաղաղությունը» եւ այլն: «Դուք նո՞ր եք ճանաչում այս ստախոսներին: Ստում են: Ասեմ, որ շատերին էլ վախեցրել են, որ եթե Նիկոլին չընտրեք, պետական ծրագրերով կառուցված տները պետությունը հետ է վերցնելու ժողովրդի ձեռքից եւ այլն, եւ այդ ամենը գյուղացու վրա մեծ ազդեցություն է թողնում»: Գուցե Գեղամ Նազարյա՞ն է այդ լուրերը տարածում: «Երեւի, նա ինձ համար արհամարհելի մեկն է, ես նրան անգամ բարեւ չեմ տալիս: Աստծո բարեւն էլ է նրա համար շատ, Գեղամից ամեն ինչ սպասելի է»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ստեփանավանը «մաստեր կլաս» է ցույց տվել

Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախնական արդյունքների համաձայն, «Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 49,825 տոկոս, «Ուժեղ Հայաստանը»՝ 23,281, «Հայաստան» դաշինքը՝ 9,934, «Բարգավաճ Հայաստանը»՝ 3,996 տոկոս ձայն: Չնայած մյուս ուժերի հանդեպ ունեցած առավելությանը, ՔՊ-ին մի շարք ընտրատեղամասերում մերժել են: Օրինակ, Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 25/31 ընտրատեղամասում ընտրությանը մասնակցած 757 ընտրողից 744-ն իր քվեն տվել է «Ուժեղ Հայաստան»-ին, 8-ը՝ ՔՊ-ին: Մեկական ձայն ստացել են «Բոլորին դեմ եմ» եւ Հայաստանի շնորհապետական կուսակցությունները: Ստեփանավանում «Ուժեղ Հայաստան»-ը բացարձակ հաղթանակ է տարել բոլոր 13 ընտրատեղամասերում՝ առաջ անցնելով մյուս ուժերից՝ 5 հազար 216 ձայն, ՔՊ-ն ստացել է 1396 քվե: Նշենք, որ այս համայնքում ընտրությանը մասնակցել է 7 հազար 567 ընտրող կամ ընտրելու իրավունք ունեցողների 57.86 տոկոսը:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՀԱՇՎԱՐԿ

2026-ԻՆ՝ ԻՆՉՊԵՍ 1996-ԻՆ. ՔՊ-Ի ՊՅՈՒՐՈՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հայաստանում եւս մեկ համապետական ընտրություն տեղի ունեցավ, որը քիչ է ասել, թե հերթական ընտրություն էր, որով ժողովուրդը պետք է որոշեր առաջիկա տարիներին իր պետության ուղղությունն ու քաղաքական ղեկավարության բնույթը: Մարդկանց բարձր տոկոսային մասնակցությունը, արմատական ընդդիմադիրների նկատմամբ վճռական տրամադրվածությունները ցույց տվեցին, որ գիտակից քաղաքացիները, մեծ հաշվով, սթափ գնահատեցին պահի լրջությունը եւ իրենցից կախված ամեն ինչ արեցին՝ դասականի ասած «ազգակործան պատուհասին» իշխանությունից հեռացնելու համար, սակայն տոտալ ճնշումներն ու հարձակումներն ընդդիմության նկատմամբ, ագրեսիվ եւ կեղտոտ հակաքարոզչությունը, ինչպես նաեւ՝ նախընտրական կաշառքի տեսքով թոշակների բարձրացումն ու անվճար բուժօգնության համակարգի ներդրումը, կեղծ խաղաղության քարոզն ու պատերազմի շանտաժն իրենց դերը խաղացին, եւ ընտրություններին մասնակցած մոտ միլիոնուկես քաղաքացիներից 700 հազար մարդ իր քվեն տվեց առնվազն վերջին վեց տարվա ընթացքում երկրին բացառապես վնաս հասցրած իշխանություններին: Ընտրությունների 18 մասնակիցներից երեքը հաղթահարեցին անցողիկ շեմը, իհարկե, քաղաքական շրջանակներին կասկածի տեղիք է տալիս ԲՀԿ-ի՝ 64 ձայնով չանցնելը, մանավանդ որ ձայների հաշվարկից հետո, մինչ ԿԸՀ-ն նախնական արդյունքները կհայտներ, ԲՀԿ-ի անցնել-չանցնելու վերաբերյալ հակասական արդյունքներ էին դաշտ նետվում, եւ չի բացառվում, որ ինչ-որ քաղաքական նկատառումով է ԲՀԿ-ն դուրս մնացել անցողիկ շեմից:

Բանն այն է, որ ԲՀԿ-ի՝ խորհրդարան մուտք գործելն էապես կփոխեր իրավիճակը, ՔՊ-ին կզրկեր Ազգային Ժողովի պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդի մեծամասնությունից (3/5), ինչը հնարավորություն է տալիս ընդունել սահմանադրական օրենքներ եւ ընտրել մի շարք կարեւոր պաշտոնատար անձանց, ինչպիսիք գլխավոր դատախազի, ԲԴԽ անդամի, Վերաքննիչ դատարանի նախագահի եւ այլ պաշտոններն են: ԲՀԿ-ին դուրս թողնելու արդյունքում նրա հավաքած ձայները բաշխվում են խորհրդարան անցած ուժերի վրա, ինչից ամենաշատը ՔՊ-ն է շահում:

Այսպիսով արձանագրենք, որ խորհրդարան անցան Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիրը», որը 50 տոկոսից պակաս ձայն հավաքեց, չնայած ադմինիստրատիվ ռեսուրսի անսահմանափակ կիրառմանը, ճնշումներին, բանակն իրենց օգտին ուղղորդելու բացահայտ դեպքերին, արցախցիներին քվեարկությունից դուրս թողնելուն: Դիցուք, Մեղրիում մինչեւ կեսգիշեր զինվորները քվեարկում էին: Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը 23 տոկոսից մի փոքր ավել ձայն ստացավ, եւ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի «Հայաստան» դաշինքը, որը, ի հեճուկս իր նկատմամբ ագրեսիվ հակաքարոզչության՝ իշխանական եւ ընդդիմադիր շրջանակներից, մոտ 10 տոկոս ձայն հավաքեց:

Այդուհանդերձ, քաղաքական շրջանակներից երեկ հնչող գնահատականները ոչ միայն ընդդիմության պարտության մասին էին, այլեւ իշխանության թույլ հաղթանակի: Բանն այն է, որ կիրառված գործիքակազմն իշխող խմբակին չբերեց այդքան բաղձալի սահմանադրական մեծամասնություն՝ առնվազն վեց ձայն պակասում է դրա համար, իսկ սա նշանակում է, որ ՔՊ-ն, դիցուք, չի կարող կատարել Ալիեւի՝ Սահմանադրությունը փոխելու տնային առաջադրանքը, եւ իր պրոպագանդած ֆեյք խաղաղությունը կասկածի տակ է դրվելու:

Քաղաքական ավելի տարեց սերնդի ներկայացուցիչներն այս ընտրությունները համեմատում են 1996 թվականի նախագահական ընտրությունների հետ, երբ Վազգեն Մանուկյանի կողմնակիցները համոզված էին, որ նա 60-65 տոկոսով հաղթել էր Լեւոն Տեր-Պետրոսյանին, սակայն վարչակարգը թվերի դասավորությունը 8 օրվա ընթացքում փոխեց՝ հօգուտ գործող նախագահ Տեր-Պետրոսյանի: Հետո անգամ Վանո Սիրադեղյանը հայտարարեց՝ եթե 100 տոկոսով հաղթել էր Մանուկյանը, այսպես պետք է լիներ: 2026-ի հետ այս համեմատության հիմքն այն էր, որ ձայների հաշվարկի մեկնարկից մոտ երեք ժամ անց հաշվարկը կանգնեց, ԿԸՀ-ն դադարեցրեց պաշտոնական տվյալներ հայտնել Երեւանի եւ խոշոր քաղաքների տեղամասերից, մինչդեռ երեք ժամում հնարավոր էր նախնական ամփոփ տեղեկատվություն տալ բոլոր տեղամասերի վերաբերյալ: Հաշվարկը ձգվեց մինչեւ լուսաբաց, որոշ հանձնաժողովների ուղարկել էին տուն, թե առավոտյան կգաք՝ կշարունակեք: Դրա փոխարեն, գիշերվա 2-ին Նիկոլ Փաշինյանը հապճեպ ասուլիս տվեց ու հայտարարեց իրենց պատմական հաղթանակի ու միանձնյա կառավարելու ձեւավորելու մասին: Հետո, երբ աղմուկ բարձրացավ, թե ԿԸՀ-ից առաջ ինչպես եք արդյունքներ հրապարակում, պարզաբանեցին, թե իբր տեղերում իրենց վստահված անձանց փոխանցած տվյալների հիման վրա են այդ հայտարարությունն անում: Մինչդեռ, ասուլիսին զուգահեռ, համացանցում տարբեր տեղամասերից օնլայն հաշվարկի լայվեր էին տարածվում:

Ընտրությունների արդյունքները բողոքարկելու եւ վերահաշվարկի մասին երեկ հայտարարեց ԲՀԿ-ն: Անկախ նրանից, թե ինչ փոփոխություններ տեղի կունենան վերահաշվարկի ընթացքում, մի բան փաստ է, որ ՔՊ-ն այլեւս չունի նախկին լեգիտիմությունն ու գործադրված տիտանական ջանքերի արդյունքում մի կերպ կասկածելի հաղթանակ է կորզել: Ի դեպ, մեզ պատմեցին, որ կուսակցության կենտրոնական շտաբում ընտրությունների արդյունքներին օնլայն հետեւող ՔՊ-ական ակտիվը երեկ նույնպես անակնկալի է եկել Փաշինյանի՝ ասուլիսում արած հայտարարությունից, թե միանձնյա են կառավարություն կազմելու: Մինչ այդ վատ կանխատեսումներ ունեցողները թեթեւացած շունչ են քաշել, թե շեֆը Վահագն Հովակիմյանի հետ սեւ գործը տեսավ, հակառակ դեպքում՝ ընտրությունների արդյունքների դեռ անգամ հիսուն տոկոսը հրապարակված չէր, եւ նման հայտարարություն անելու ոչ մի հիմք չկար:

2021 թվականի արտահերթ ընտրությունների համեմատ ՔՊ-ն մոտ հիսուն հազարով ավելի ձայն է ստացել՝ հավաքելով 727 հազար քվե, իսկ մասնակցությունը 21-ի համեմատ մոտ 300 հազարով ավելի է:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՍԱՏԱՆԱՆ ԷԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԵՍ ԱՍՏՈՒԾՈ ԽՈՍՔ ԷՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ՝ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

«Հրապարակի» զրուցակիցն **Արտաշես սարկավագ Աջապահյանն** է:

- Նիկոլ Փաշինյանն ընտրություններից առաջ, որպես նախընտրական խոստում, իր ընտրողներին հավաստիացրեց, որ երբ վերընտրվի, Վեհափառի հարցը նորից օրակարգ է բերելու եւ փոխելու է Եկեղեցու փաստացի ղեկավարին այլ անձով: Թե Սահմանադրության որ օրենքով է Փաշինյանը նման բան խոստացել, դա հարցի մյուս կողմն է, սակայն այժմ, երբ նա վերընտրվել է, չկա՞ մտավախություն, որ կարող է նորից հարձակվել Հայ առաքելական եկեղեցու վրա եւ այս անգամ հաջողել:

- Նախ ասեմ, որ նրա հաղթանակը փաստ չէ, ընտրությունները կեղծվել են: Ոչ մի ընտրության ժամանակ ես չեմ հիշում, որ հանձնաժողովի անդամներին ուղարկեն տուն, ասեն՝ գնացեք քնեք, առավոտյան կգաք հաշվարկը շարունակելու: Նման բան երբեք չի եղել, բոլոր ժամանակներում քվեարկությունն ավարտվել է ուշ գիշերին: Ես մեծ կասկածներ ունեմ, որ այդ ընդմիջումներն արվել են ընտրակեղծիքների նպատակով:

- Որտե՞ղ են եղել նման դեպքեր, Գյումրի՞ում:

- Ընդհանուր՝ ես նման տեղեկություններ եմ ստացել: Տեղամասեր են եղել, որտեղ քվեարկությունը կիսատ են թողել, առավոտյան են շարունակել: Ամեն դեպքում, ես հակված եմ հավատալու, որ ընտրությունները կեղծվել են, եւ հույս ունեմ, որ ընդդիմադիր ուժերն այս անգամ կկարողանան հասնել հաջողության եւ կհասնեն իշխանափոխության:

- Փաշինյանն ընտրություններից հետո՝ մինչեւ ԿԸՀ-ն նախնական արդյունքները կհրապարակեր, հենց գիշերն ասուլիսով հանդես եկավ եւ այն մեկնարկեց սաղմոսով: Նա փորձում է հանրությանը ներկայանալ իբրեւ որպես հավատացյալ քրիստոնյա, ինչի՞ է ուզում հասնել դրանով: Մենք տեսնում ենք, որ նրա արարքները, մեղմ ասած, հավատացյալ մարդու արարքներ չեն:

- Սատանան էլ էր սաղմոսներով խոսում Քրիստոսի հետ: Նիկոլ Փաշինյանը, հավանաբար, ուզում է սատանային նմանվել եւ շարժվում է այդ ոճով: Նա Աստծո խոսքով խաբում է ժողովրդին, սատանան էլ Աստծո խոսքով է խաբում մարդկանց, հատկապես նրանց, ովքեր իմաստնություն չունեն: Սատանան էլ, Փաշինյանի պես, ոչ թե փրկության համար էր Աստծո խոսք ասում, այլ՝ կործանման:

- Այնուամենայնիվ, եթե Նիկոլ Փաշինյանը որեւէ գնով, կլինի կեղծիքների միջոցով, թե արդար ընտրությունների արդյունքում, դարձավ վարչապետ, Եկեղեցին կդնի՞ հարվածի տակ, կկարողանա՞ Եկեղեցու դեմ քայլերում հաջողել:

- Առաքելական եկեղեցին անխորտակելի է, որովհետեւ Եկեղեցու գլուխը Քրիստոսն է: Այդ մարդն իրեն քրիստոնյա է հռչակել, բայց նա քրիստոնյա չէ: Երկու միտք է արտահայտել, որոնք բացահայտում են այս մարդու ոչ քրիստոնյա լինելը: Առաջինն այն միտքն է, որ Եկեղեցին թուլացնում է պետությունը, եւ այն մարդու կողմից ստեղծված կառույց է: Իշխանական շրջանակներն ասում են՝ երբ Եկեղեցին հզորացել է, պետությունը սկսել է թուլանալ: Եկեղեցու եւ պետության միջեւ մրցակցություն են փորձում մտցնել եւ ուզում են հանրությանը համոզել, որ Եկեղեցին թուլացնում է պետության հիմքերը, դրա համար պետք է Եկեղեցին թուլացնել, որպեսզի ուժեղանա պետականությունը: Սա արդյո՞ք հավատացյալ քրիստոնյա մարդու ասած խոսք է: Եթե նա մտածեր, որ Եկեղեցին աստվածային կառույց է, երբեք նման հայտարարություններ չէր անի: Պետականությունը թուլանում է մարդկանց մեղքերի ու սխալների արդյունքում, Եկեղեցին միշտ օգնել է՝ հաղթահարելու այն փուլերը, երբ վտանգի տակ է եղել Եկեղեցին, բայց քանի որ մենք գործ ունենք ոչ հավատացյալ մարդկանց հետ, հետեւաբար, նրանց մտածողությունը սա է: Այս մարդկանց պայքարը ոչ թե հոգեւորականների դեմ է, այլ հենց Հայ առաքելական եկեղեցու, եւ դա ակնհայտ է: Մյուս արտահայտությունն էլ այն է, որ մենք պետք է Եկեղեցին վերադարձնենք Քրիստոսին, պետք է օգնենք Քրիստոսին եւ այլն: Այս հայտարարություններն էլ արել է Եկեղեցու վրա հարձակման ժամանակ: Այս հայտարարությունից ստացվում է, որ Քրիստոսն ունի օգնության կարիք, դա նշանակում է, որ Քրիստոսը թույլ էր, նրա ձեռքից խլել էին Եկեղեցին, իսկ ինքը Քրիստոսից ավելի ուժեղ է, կարող է Եկեղեցին վերադարձնել Քրիստոսին: Սա հերետիկոսություն է: Նա Քրիստոսին չի ընդունում որպես Աստծո որդի: Քրիստոսն ասում է՝ այն, ինչ տվեց ինձ Հայրը, ոչ ոք չի կարող խլել....

- Հնարավո՞ր է, որ նորից տիրադավ հոգեւորականներին ակտիվացնեն, թե՞ նրանք զղջում են:

Տիրադավների մեջ, ամեն դեպքում, կան կրթվածներ, եւ նրանք մշտապես դեմ են արտահայտվել իշխանություններին, սակայն գնացին իշխանությունների հետեւից: Եթե Փաշինյանն ակտիվացնի, գուցե ակտիվանան: Նրանք մտել են Նիկոլ Փաշինյանի իշխանության տակ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԵՄ ԵՄ

ԱՅՍ ԱՄԵՆԸ 2017-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԻՆՁ ՀԻՇԵՑՆՈՒՄ՝ Ի՞ՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԵՏՈ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքական գործիչ, «Բոլորին դեմ եմ» կուսակցության հինգերորդ համար **Միքայել Նահապետյանն** է: «Բոլորին դեմ եմ» կուսակցությունը ստացել է 21 հազար 477 ձայն, ընտրություններին մասնակցածների մոտ 1,5 տոկոսի ձայները:

- Ինչպե՞ս եք գնահատում ընտրությունների արդյունքները: Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր հետագա աշխատանքը, անելիքը:

- Մի քանի բան հստակ է: Այս համակարգը, այս խաղի կանոնները պետք է փոփոխության ենթարկվեն: Մենք վճռականորեն լավատես ենք փոփոխություններ կատարելու հարցում: Մեր կամքը ամուր է, եւ շարունակելու ենք մեր ճանապարհը, փոփոխություններ բերելու ենք: Պետք է շատ ավելի մեծ փոփոխությունների մասին մտածենք, քան պարզապես քաղաքական համակարգի խաղի կանոնների փոփոխությունն է:

- Ի՞նչ փոփոխություններ կարող եք անել՝ առկա վիճակում:

- Դեռեւս պետք է աշխատենք հանրային նարատիվները փոխելու հարցում: Առանց հանրային նարատիվների փոփոխության ոչ մի փոփոխություն չենք կարողանա կատարել: Հետեւում եմ քաղաքական ուժերի հայտարարություններին, դրանք այնքան էլ հուսադրող չեն թվում եւ կարծես այն մասին են հուշում, որ այս խորհրդարանը նախորդ խորհրդարանից էապես չի տարբերվելու:

- Ի՞նչ նարատիվներ եք ցանկանում փոխել:

- Պետք է նորմալիզացնել պայքարը, բայց չպետք է նորմալիզացնել շարունակ ընդդիմություն լինելը, պետք է ապանորմալիզացնել այս պառլամենտում իրար վրա շշեր շպրտելն ու չգիտես էլ ինչեր անելը: Ի վերջո, պետք է գործ անել, որպեսզի մարդիկ համոզվեն, որ հաջորդ անգամ այսպես չի լինելու:

- Ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս կարողացավ ՔՊ-ն նորից հաղթել, թեկուզ 49 տոկոս ձայն տանել:

- Իմ կարծիքով՝ այս «տորթը» երկու մեծ կտորից է բաղկացած, առաջինը հստակ իշխանական ֆորան է, երկրորդն էլ այն է, որ Փաշինյանն ունի հստակ օրակարգ, որը թունավոր է, բայց կա, եւ իր ընտրազանգվածին գրավեց: Իրականում, ոչ մի աննախադեպ բան տեղի չի ունեցել: Այս ամենը 2017 թ. ընտրությունների կրկնությունն է ինձ հիշեցնում, արդյունքները ճշգրիտ նույնն են, ինչ 2017 թվականին, բայց այն, ինչ եղավ 2017 թվականից ուղիղ մեկ տարի անց, բավականին հուզիչ ու տխուր էր այն ժամանակվա իշխանությունների համար, այնպես որ՝ ամեն ինչ դեռ առջեւում է:

- Այսինքն՝ ակնարկում եք, որ Փաշինյանին, եւս ինչպես որ իրեն իշխանությունը հանձնած Սերժ Սարգսյանին, հեռացնելու են հեղափոխությամբ:

- Ես այս ընտրությունների արդյունքներից հետո մի բան տեսա, ինչը 2018 թվականից հետո առաջին անգամ տեղի ունեցավ, դա այն է, որ մեր հասարակության մեծամասնությունը տվեց իշխանափոխության պատվեր: Մենք նման իրավիճակ չէինք ունեցել 2018-ից հետո, նախքան այս պահը:

- Ինչպե՞ս եք եկել այդ համոզմունքին:

- Ընդդիմադիր ուժերը, ովքեր իշխանափոխություն են ուզում, ավելի շատ ձայներ են ստացել, քան նրանք, ովքեր չեն ուզում իշխանափոխություն:

- Բայց արդյունքում Փաշինյանը հաղթեց:

- Բայց չստացավ մեծամասնություն: Իշխանությունը երբեմն նաեւ նվեր են ստանում, բայց էականն այն է, որ մեր հասարակության մեծամասնությունը տվեց իշխանափոխության պատվեր: Մեկ-երկու տարվա ընթացքում ամեն ինչ պարզ կլինի:

- Այդ դեպքում ինչո՞ւ փողոցները մարդկանցով ողողված չեն:

- Այդ հարցին պետք է ընդդիմադիր ուժերը պատասխանեն:

- Դուք էլ եք ընդդիմադիր ուժի ներկայացուցիչ:

- Մենք չենք ստացել ձայների այնպիսի քանակ, որ կարողանայինք փողոց մոբիլիզացնել եւ խոսել Կառավարություն ձեւավորելու մասին: Փողոց պետք է դուրս գալ միայն մեկ պարագայում՝ երբ դու պետք է հաղթեիր, սակայն տեղի են ունեցել անարդարություններ: Մենք նման իրավիճակում չենք հայտնվել եւ հունիս ամսին չենք պատրաստվում մարդկանց հանել քաղաքական զբոսանքների: Ես չեմ ուզում որեւէ ուժի խելք սովորեցնել, ես ամենասկզբում հայտարարել եմ, որ բոլորին դեմ եմ եւ ունեմ հստակ անհամաձայնություն՝ Նիկոլ Փաշինյանի մոտ ընդդիմադիր աշխատելու հարցում: Ինքս պնդել եմ, որ երբեք նման բան չեմ անի, եւ կարծում եմ, որ ոչ մի բարեպաշտ մարդ չպետք է նման քայլի գնա, բայց, ամեն դեպքում, ցանկացած քաղաքական ուժ ինքն է որոշում՝ ինչ արժեքներով առաջնորդվել: Մենք չենք կարող այդ հարցում ուղղորդել որեւէ ուժի:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԹԵ ԽԱՂԱՂՈՒՄ Է, ԻՆՉՈ՞Ւ ԵՔ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԵԾ ՊԱՏ ԱՌՔԵԼ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բաղանիս գյուղում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 50 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի նոր շենք է կառուցում: Կապալառուն Իջեւանի «Խաչմիշշին» ՍՊԸ-ն է: Շինարարությունը սկսվել է 2025թ. սեպտեմբերին, նախատեսված է այն ավարտել 2026թ. հոկտեմբերին: Մանկապարտեզը կառուցվում է Բաղանիսի դպրոցի շենքին հարակից տարածքում: Այդ տարածքի դեմդիմաց Ադրբեջանի Ղազախի շրջանի Ղուշչի Այրում գյուղի հենակետերն են: Այդ բարձունքից, հենակետերից 1990-ական թվականների սկզբին Բաղանիսը շատ է գնդակոծվել, հրետակոծվել, որոնց հետեւանքով Բաղանիսը բազում զոհեր ու վիրավորներ է ունեցել: Հիմա մանկապարտեզի նոր շենքն Ադրբեջանի հենակետերից պաշտպանելու համար երկար, բարձր պատ են կառուցել: Եթե Ադրբեջանի հետ խաղաղություն է հաստատվել, ի՞նչ կարիք կար նման պաշտպանիչ մեծ պատ կառուցելու: Հավելեմ, որ Բաղանիսի բնակիչները հավատում են Նիկոլ Փաշինյանի հռչակած խաղաղությանը: Հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքում Բաղանիս գյուղում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 300 ձայն, «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 76, «Հայաստան» դաշինքը՝ 20 քվե:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌԱՆՁԻՆ ԵՆ ԱՊՐՈՒՄ, ՈՐ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԹԱՔՑՆԵ՞Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքն արդեն 5 օր է՝ աշխատում է մասամբ: Կայքում հնարավոր չէ մուտք գործել հայտարարագրերի ռեեստր, որտեղ հրապարակվում են պաշտոնյաների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերը: Բանն այն է, որ հունիսի 1-ին պաշտոնյաների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից հայտարարագրեր ներկայացնելու ժամկետն ավարտվել էր: ԿԿՀ-ից մեր հարցին ի պատասխան հայտնեցին, որ կայքում առկա է տեխնիկական խնդիր, եւ հնարավոր չէ ժամկետներ նշել, թե երբ հայտարարագրերի ռեեստրը նորից հասանելի կդառնա:

Հետաքրքրվել էինք նաեւ, թե պաշտոնատար անձանց հետ չբնակվող հարազատներն արդյոք կարո՞ղ են հայտարարագիր չներկայացնել: Ի պատասխան՝ ԿԿՀ-ից հայտնել էին, որ վերջիններս հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունեն: Հունիսի 3-ի դրությամբ, երբ դեռ հասանելի էր ռեեստրը, կայքում բացակայում էին Նիկոլ Փաշինյանի ընտանիքի անդամների՝ 2025-ի տարեկան հայտարարագրերը: Ընդ որում, Աշոտ Փաշինյանը վերջին անգամ հայտարարագիր ներկայացրել է 2022-ին: Բացակայում էր նաեւ Աննա Հակոբյանի հայտարարագիրը, որը Փաշինյանից բաժանվելու մասին հայտնել էր փետրվարի վերջին: Այսինքն, 2025-ին՝ հաշվետու ժամանակահատվածում վերջինս հանդիսացել է Նիկոլ Փաշինյանի կինը: Ի դեպ, Մարիամ Փաշինյանը, որը եւս հայտնել էր միայնակ ապրելու մասին, վերջին անգամ հայտարարագիր ներկայացրել է 2024-ին: Ստացվում է՝ կարող են պաշտոնյաների զավակները նրանցից առանձին ապրել կամ այլ հասցեում հաշվառված լինել եւ հանրությանը հաշվետու չլինել իրենց եկամուտների եւ անշարժ ու շարժական գույքերի վերաբերյալ: Նշենք, որ 2024-ից ՀՀ-ում, ըստ օրենքի, բոլորը պետք է հայտարարագրեր ներկայացնեն, սակայն քաղաքացիները հայտարարագրեր ներկայացնում են ՊԵԿ, որոնց այլ անձինք հասանելիություն չունեն՝ ի տարբերություն պաշտոնյաների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերի:

Ավելի վաղ գրել էինք, որ, գրավոր հարցմանն ի պատասխան, ԿԿՀ-ից տեղեկացել էինք, որ 67 պաշտոնատար անձ եւ տարբեր կուսակցությունների 164 ներկայացուցիչ տարեկան հայտարարագիր չեն ներկայացրել: Հայտարարագիր չեն ներկայացրել ՔՊական պատգամավորներ Վահագն Ալեքսանյանը եւ Մերի Գալստյանը, Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը:

Հայտարարագիր չի ներկայացրել նաեւ Ժաննա Անդրեասյանի օգնական Գոհար Եղիազարյանը, Սիսիանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Հովհաննես Ալեքսանյանը, ինչպես նաեւ՝ տարբեր համայնքների ավագանիների մի քանի տասնյակ անդամներ: ԿԿՀ-ն գրավոր ծանուցագրեր է ուղարկել հայտարարագիրը չներկայացրած բոլոր հայտարարատուներին, այդ թվում՝ պաշտոնյաների ընտանիքի անդամներին: Եթե վերջիններս մինչեւ հունիսի 31-ը հայտարարագիր չներկայացնեն, ապա սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով կտուգանվեն:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՄԱՆԴԱՏՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՉԻ ՀԱՍՈՒՆԱՑՆԻ

Տարբեր քաղաքական գործիչներ եւ ակտիվիստներ, նախկին պատգամավորներ ու վերլուծաբաններ խորհրդարան անցած ընդդիմությանը միաբերան նույն խորհուրդն են տալիս՝ չվերցնել մանդատները, չգնալ խորհրդարան, որը, ըստ նրանց, քաղաքական ճգնաժամի պատճառ կդառնա՝ գործող իշխանությունը կապալեգիտիմանա, իսկ անօրինական իշխանությունից ազատվելուց էլ հեշտ գործ: Հիմնավորումներից մեկն էլ այն է, որ հասարակությունը, նրա ընդդիմադիր հատվածը ձայն է տվել, որ մարդիկ իշխանափոխություն անեն, ոչ թե գնան խորհրդարանում պատգամավոր աշխատեն: Այս նույն պահանջը հնչեցվում էր նաեւ 2021-2026 թվականների խորհրդարանական ընդդիմությանը:

Առաջին հայացքից այս պահանջը տրամաբանական է հնչում, թվում է՝ եթե ընդդիմությունը չճանաչի խորհրդարանական ընտրությունների արդյունքները՝ հիմնավորելով, որ դրանք ակնհայտորեն կեղծված են՝ նախընտրական քարոզարշավն ընթացել է համատարած ճնշման, բռնության եւ վարչական ռեսուրսի չարաշահման պայմաններում, եւ այդ ամենն ուղեկցվել է անգամ քվեարկության օրը, որ ընդդիմադիր կուսակցությունները չեն ունեցել հավասար պայմաններ՝ մասնակցելու քարոզարշավին՝ ուժային կառույցները եւ անգամ զինված ուժերը ծառայեցվել են իշխող ուժի վերարտադրությանը: Եթե ընդդիմությունը չի ճանաչում կեղծված ընտրությունների արդյունքները, բնական է, որ հաջորդ քայլը պետք է լինի այդ կեղծված ընտրությունների արդյունքում իրենց բաժին հասած կամ հանված մանդատներից հրաժարվելը: Բայց ենթադրենք, թե ընդդիմությունը հրաժարվեց մանդատներից եւ չգնաց խորհրդարան, որքանո՞վ այդ քայլը կապալեգիտիմացնի իշխանությանը կամ որքանո՞վ կօգնի իշխանափոխություն իրականացնելուն:

Ուզում եմ բերել Վրաստանի օրինակը, որը եւս խորհրդարանական կառավարում ունեցող երկիր է: 2024 թվականի հոկտեմբերին այս երկրում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը պաշտոնական տվյալներով հաղթանակ տարավ՝ ստացավ մոտ 53 տոկոս: Խորհրդարան անցավ եւս չորս կուսակցություն, բայց նրանք միասին չէին կարող ազդել իշխանության ձեւավորման վրա, քանի որ միասին ավելի քիչ ձայն ունեին, քան իշխող «Վրացական երազանքը»: Նրանք չճանաչեցին ընտրությունների պաշտոնական արդյունքները, հրաժարվեցին վերցնել իրենց հասանելիք մանդատները եւ հասարակությանը փողոցային պայքարի կոչ արեցին: Չնայած հասարակական դժգոհության ալիքին, բազմաթիվ ցույցերին, իշխանությունը կարողացավ հանդարտեցնել բողոքի ալիքը, այդ թվում՝ ընդդիմության տասնյակ առաջնորդների եւ հարյուրավոր ակտիվիստների կալանավորելու միջոցով: Ընդդիմությունը խորհրդարանական ընտրություններից գրեթե երկու տարի անց չի վերցրել մանդատները, եւ արդյոք դա ինչ-որ կերպ Վրաստանում քաղաքական ճգնաժամ առաջացրո՞ւմ է: Իհարկե՝ ոչ: Իշխանության պատգամավորներն առանց ընդդիմության էլ նիստեր են անում, օրենքներ ընդունում, եւ գործադիր իշխանությունն էլ առանձնապես իրեն վատ չի զգում այդ պայմաններում: Սա՝ այն դեպքում, երբ Վրաստանի ընդդիմադիր ուժերն ունեն Արեւմուտքի՝ ԵՄ-ի բացահայտ աջակցությունը, երբ նույն ԵՄ-ն էր պահանջում չեղարկել 2024 թվականի խորհրդարանական ընտրությունները եւ նոր ընտրություններ կազմակերպել: Բայց նույն ԵՄ երկրները եւ ԵՄ պաշտոնական կառույցները շատ հանգիստ հարաբերվում են Վրաստանի գործող իշխանությունների հետ:

Հայաստանում վիճակն անհամեմատ ավելի վատ է. ԵՄ երկրները եւ այդ երկրների ղեկավարներն արդեն հասցրել են շնորհավորել Փաշինյանի կեղծված հաղթանակը, Վրաստանի վարչապետը դա արեց նույնիսկ մինչեւ ընտրության արդյունքների հրապարակումը՝ ցույց տալով, որ իրենք Փաշինյանի կառավարումից շատ գոհ են եւ ինչ-որ ստանալիքներ ունեն նրանից: Հիմա եթե Հայաստանի ընդդիմությունը՝ «Ուժեղ Հայաստանը» եւ «Հայաստան» դաշինքը չվերցնեն մանդատները եւ չգնան խորհրդարան, դա ինչպե՞ս է քաղաքական ճգնաժամ առաջացնելու, ի՞նչն է խանգարելու ՔՊ-ի պատգամավորներին՝ հավաքվել ու միայնակ նիստ անել եւ իրենց վրա պետք է զգան դրա գոյության կործանարար լինելը, ինչը շատ իրական է: Եթե մարդիկ պատրաստ են հանդուրժել Փաշինյանին եւ նրա ռեժիմը, ո՛չ մանդատ վերցնելը, ո՛չ էլ չվերցնելը չի կարող ճգնաժամի պատճառ դառնալ կամ, առավել եւս՝ չեզոքացնել ճգնաժամը: Իսկ բոլոր նրանք, ովքեր կասկածի տակ են դնում ընդդիմության գործունեության արդյունավետությունը, նրանց համար միշտ եւ բոլոր ժամանակներում նույն խորհուրդը կամ հորդորը կա. իրենք վատն են, դուք դարձեք ավելի լավ ընդդիմություն:

Քաղաքական ճգնաժամ կարող է հասունանալ միայն այն դեպքում, երբ հասարակությունը, հասարակության ճնշող մեծամասնությունը հասկանա, գիտակցի, որ գործող վարչախմբի առկայությունը վտանգում է իր գոյությունը, որ սրանց այլեւս հանդուրժելը գոյաբանական վտանգ է յուրաքանչյուրի համար, կա՛մ իրենք, կա՛մ մենք: Ավելի պարզ ասած՝ ռեժիմի պաշտպանները կամ անտարբերներն իրենց կաշվի

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉՈՒ ՀԱՅԵՐԸ ՉՀԵՌԱՑՐԻՆ ՆԻԿՈԼԻՆ

Պատճառները շատ են: Կարող եք ասել՝ Նիկոլն աննախադեպ բաներ արեց, ժամանակից շուտ իրեն հռչակեց վարչապետ, ինքը որոշեց միայնակ կառավարություն ձեւավորել, ԵՄ-ն օգնեց, Ամերիկան օգնեց, Թուրքն օգնեց, Պուտինը մի բան էն չարեց, ընտրախախտումներ, թվանկարչություն: Լիքը բան կարելի է ասել: Նիկոլի այս պյուռոսյան հաղթանակի մասին, սակայն, ոչ մի քաղաքագիտական վերլուծություն լիարժեք չի լինի, եթե աչքաթող անենք այդ «հաղթանակի» ամենահիմնավոր պատճառները:

Եվ, ուրեմն, ինչո՞ւ հայերը չհեռացրին Նիկոլին՝ ունենալով թե՛ հրաշալի հնարավորություն, թե՛ լրջագույն պատճառներ: Պարադոքս է. քեզ տանում է պարտության՝ դու նրան ես ընտրում, տալիս է 5 հազար զոհ, 12 հազար վիրավոր, հանձնում է Արցախը, Հայաստանի սուվերեն տարածքները, միեւնույն է, դու նրան ես ընտրում: Ասել, թե նախկինները Նիկոլից ավելի շատ ցավ ու զրկանք էին պատճառել հայ ժողովրդին, ճիշտ չի լինի: Նախկինների ժամանակ հայ ժողովուրդը գոնե պաշտպանված էր, երկիրն անտերուդուս ընկած չէր օտարի ոտքի տակ, բանակ ունեինք, մեզ հետ հաշվի էին նստում, նորմալ գնում-գալիս էին, բանակցում էին մեզ հետ: Թումանյանի խոսքով՝ ապրում էինք, էլի, մեռած հո չէինք… Հույս ունեինք՝ զարգացնել մեր երկիրը, ավելի հզորացնել… Բայց մեկ էլ Նիկոլը եկավ, ու պարզվեց, որ մեզ տրված չէ այդ ամենը, որ մենք հայի բախտ ունենք ու պարտավոր ենք խաչի պես կրել այդ բախտը: Ամեն ինչ ոչնչացրեց, վերացրեց, քանդեց… Պատերազմ, մահ, հայրենազրկում… Գիտություն, մշակույթ, ստեղծագործ աշխատանք՝ փախան մեր երկրից, բանկը դարձրեց պանսիոնատ, ուժայիններին՝ ձեռնասուն կուռկուռի ձագ, դռները բոլոր կողմերից բացեց ասպատակությունների առաջ… Մենք, սակայն, Նիկոլ ընտրեցինք: Դեբիլ էինք, թե՞ հայի բախտ ունեինք՝ չեմ հասկանում:

Իսկ երեկվա ընտրություններն ինչ էին… Խայտառակություն: 21 թվից այսկողմ այդ մարդը ոչ մի օր չի դադարել քանդել, փչացնել, ոչնչացնել… Էլ տուն, էլ ընտանիք, էլ եկեղեցի, էլ դպրոց, էլ գյուղ… Ամեն ինչ: Բանտերը լիքն են, ամեն օր՝ քրեական հետապնդում, ձերբակալություններ, շինծու մեղադրանքներ, կեղծ դատավարություններ, հաբռգած ոստիկանություն ու դատախազություն, քննչական ու հակակոռուպցիոն օրակարգ: Պիտի վերջ ունենա՞ր սա, թե՞ ոչ, մանավանդ որ կար դրա հրաշալի հնարավորությունը՝ ընտրությունը: Չէ, վերջ չունեցավ, էլի ընտրեցինք, էլի չկարողացանք չընտրել: Նրան ոչ ոք չօգնեց: Եկեք մեր մեղքն ուրիշների վրա չբարդենք: Ընտրել ենք: Ով ուզում է, թող ասի՝ ես չեմ ընտրել: Ընտրել ենք: Ընտրել ենք հավաքաբար:

Նա ընտրվեց կրկին, որովհետեւ մենք ուզում ենք խաղաղություն ամեն գնով՝ սողալով լինի, կոշիկ լիզելով, ամեն անգամ մի բան տալով: Միայն թե թշնամին պատերազմ չսկսի: Նա ընտրվեց կրկին, որովհետեւ, ինչպես Արցախը, երեւանցու տանձին չեն Սյունիքը, Վայքը, Արարատը, Արագածոտնը, Արմավիրը, Շիրակը, Լոռին, Գեղարքունիքը, Տավուշը, Կոտայքը, որովհետեւ շիրակցու եւ մյուսների տանձին չէ Երեւանը… Այսօր մեր հավաքական տանձին չեն 300 հազար ադրբեջանցիների ներգաղթը Հայաստան, Հայաստանից նոր տարածքների հանձնումն Ադրբեջանին: Նիկոլը վաղուց է հոգացել, որ ամեն ինչ հենց այդպես լինի, որ մենք անտարբեր դառնանք մեր ու մեր հայրենիքի ճակատագրի հանդեպ:

Եթե առաջիկա կիրակի օրը ընտրություններ նշանակվեն, մենք դարձյալ Նիկոլ ենք ընտրելու՝ մոռանալով այդ մարդու ամենավերջին այլանդակությունները՝ Հայաստանում իրական բռնապետություն հաստատելու ուղղությամբ: Ձայները չհաշված՝ ինքզինքը հռչակեց միանձնյա վարչապետ: Հա, բայց ի՞նչ է եղել, էլի կգնանք ու կընտրենք: Սովորել ենք ապրել ստի ու կեղծիքի մեջ, դավաճանության եւ մեզ մանրից հայրենազրկող այս մթնոլորտում: Սովորել ենք: Նիկոլն է սովորեցրել: Մենք վաղուց մեր դռան առջեւի փալասից այնկողմ ոչինչ չենք տեսնում: Իսկ դա սովորական կարճատեսություն չէ, դա արդեն ուղեղի հիվանդություն է:



Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՔՊ-ական Վլադիմիր Վարդանյանն անձի երկվությո՞ւն ունի, թե՞ էվոլյուցիա է ապրել

ԱՆՀԱՍԿԱՆ

Վերջին տարիներին ՔՊ-ականները, իրար հերթ չտալով, տարբեր ժամանակահատվածներում տարբեր ինտենսիվությամբ ուրանում են հայ ժողովրդի սրբությունները՝ Արարատ լեռը, Արցախյան գոյամարտը, Արցախը, ցեղասպանության ճանաչման պայքարի կարեւորությունը եւ այլն: Նիկոլ Փաշինյանից հետո ուրացման շքերթում ամենակտիվներից մեկն Անդրանիկ Քոչարյանն էր, որը դեռ տարիներ առաջ կասկածի տակ դրեց Հայոց ցեղասպանության իրողությունը՝ հարց հնչեցնելով, թե արդյո՞ք որեւէ տեղ կան ցեղասպանության ընթացքում զոհված մարդկանց/հայերի ցուցակները: Այս սահմռկեցուցիչ հարցն այն ժամանակ շատերիս ցնցեց, մենք՝ հայ հասարակությունը, որ այս տարիներին շատ հակահայկական խոսույթ է տեսել ու լսել փաշինյանական իշխանությունից, կարծում էր, թե գոնե ցեղասպանության մասով նման բան չէր լսի, բայց....

Սամվել ՎԱՐԴԱՆՅԱՆ

Առանձնահատուկ ցավալի է այն, որ նման խոսույթ կարող են հնչեցնել լավ կրթություն ստացած, պատմությանը ծանոթ, որեւէ ոլորտում կայացած մասնագետ ՔՊ-ականները, անգամ նախկինում՝ «մինչհեղափոխական» Հայաստանում լուրջ պաշտոններ զբաղեցրած մարդիկ, ինչպիսին է, օրինակ, Անդրանիկ Քոչարյանը: Մի բան է, երբ անհեթեթ, հակահայկական խոսույթ ես լսում «սեՊտեմբեր»-ին «սեԿտեմբեր» ասող ՔՊ-ական պատգամավորից կամ լուրջ դեմքով «իմ կենսագրության մեջ սեր կա» ասող ՔՊ-ականից, լրիվ այլ բան է, երբ դա հնչում է թվացյալ խելացի, ճանապարհ անցած պաշտոնյայից ու պատգամավորից:

Ուրացման ենթակա արժեքների ցուցակը երկար է, այսօր ուզում ենք անդրադառնալ ամենաանթույլատրելի մեկին՝ ցեղասպանության ուրացմանը: Ձեռքիս տակ է հայտնվել տարիներ առաջ՝ «մինչհեղափոխական» Հայաստանում հրատարակված եռահատոր մի ժողովածու՝ ցեղասպանությունը վերապրածների վկայությունների մասին («Հայոց ցեղասպանությունը՝ Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ»), որի նախաբանը գրել է, ոչ ավել, ոչ պակաս՝ ՔՊ-ական իրավաբան, ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Նա, օրինակ, գրել է, որ նման ժողովածուներն իրավական առումով անգնահատելի նշանակություն ունեն: Այս տողերը գրելուց 10-12 տարի անց Վարդանյանը դարձել է մի թիմի անդամ, որոնք լռության են մատնում ցեղասպանության փաստը, ասում են՝ ցեղասպանության ճանաչումը մեր առաջնահերթությունը չէ, ասում են՝ անցյալի ողբերգական էջը պետք է թերթել ու մոռանալ, եւ ցեղասպանության զոհերի ցուցակներ են պահանջում, որպես ապացույց այն բանի, որ ցեղասպանություն եղել է:

2010-ականներին հրատարակված այս գրքի առաջաբանը, որի հեղինակը ՔՊ անդամ Վլադիմիր Վարդանյանն է, վերնագրված է. «Հայոց ցեղասպանությունը վերապրած անձանց շրջանում կազմակերպված փաստահավաք առաքելության արդյունքների արդի իրավական նշանակության մասին», որտեղ հատկապես կարեւորել են 1916 թվականին Հայ հեղափոխական դաշնակցության անցկացրած փաստահավաք աշխատանքները: Այո, սա այն նույն ՔՊ-ականն է, որի թիմն այսօր առավոտից երեկո, բոլոր հնարավոր ու անհնարին հանցագործություններում մեղադրում է Դաշնակցությանը՝ նրան ներկայացնելով որպես ապազգային կառույց: Եվ սա այն ՔՊ-ականն է, որի թիմակից արտգործնախարարը դաշնակցական պատգամավոր Քրիստինե Վարդանյանին օրեր առաջ Հ1-ի տաղավարում ասում էր, որ հենց նա է ամենամեծ ազգային անվտանգության սպառնալիքը Հայաստանի համար, երբ վերջինս հետաքրքրվում է, թե որ երկրներն են Հայաստանի համար սպառնալիք այսօր:

Տարիներ առաջ, երբ ՔՊ-ն դեռ իշխանության չէր, Հայոց ցեղասպանության ուրացման խնդիր էլ դեռ դրված չէր, ու ՔՊ-ականները՝ ուսյալից մինչեւ թերուս, ստիպված չէին մտնել այդ ամոթալի գծի մեջ, իրավաբան Վլադիմիր Վարդանյանն իր առաջաբանում գրում էր, որ սույն ժողովածուում արտացոլված վկայությունները կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության որակման համար իրավական նշանակություն ունեցող փաստեր ապացուցելու համար, որ «վերը նշված ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվությունից զատ, ժողովածուում ամփոփված վկայություններն ունեն չափազանց մեծ նշանակություն՝ Արեւմտյան Հայաստանի եւ Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերի բնակչության, ցեղասպանության ընթացքում զոհվածների, ստացած վնասվածքների հետեւանքով հեռացերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Նա, օրինակ, գրել է, որ նման ժողովածուներն իրավական առումով անգնահատելի նշանակություն ունեն: Այս տողերը գրելուց 10-12 տարի անց Վարդանյանը դարձել է մի թիմի անդամ, որոնք լռության են մատնում ցեղասպանության փաստը, ասում են՝ ցեղասպանության ճանաչումը մեր առաջնահերթությունը չէ, ասում են՝ անցյալի ողբերգական էջը պետք է թերթել ու մոռանալ, եւ ցեղասպանության զոհերի ցուցակներ են պահանջում, որպես ապացույց այն բանի, որ ցեղասպանություն եղել է:

2010-ականներին հրատարակված այս գրքի առաջաբանը, որի հեղինակը ՔՊ անդամ Վլադիմիր Վարդանյանն է, վերնագրված է. «Հայոց ցեղասպանությունը վերապրած անձանց շրջանում կազմակերպված փաստահավաք առաքելության արդյունքների արդի իրավական նշանակության մասին», որտեղ հատկապես կարեւորել են 1916 թվականին Հայ հեղափոխական դաշնակցության անցկացրած փաստահավաք աշխատանքները: Այո, սա այն նույն ՔՊ-ականն է, որի թիմն այսօր առավոտից երեկո, բոլոր հնարավոր ու անհնարին հանցագործություններում մեղադրում է Դաշնակցությանը՝ նրան ներկայացնելով որպես ապազգային կառույց: Եվ սա այն ՔՊ-ականն է, որի թիմակից արտգործնախարարը դաշնակցական պատգամավոր Քրիստինե Վարդանյանին օրեր առաջ Հ1-ի տաղավարում ասում էր, որ հենց նա է ամենամեծ ազգային անվտանգության սպառնալիքը Հայաստանի համար, երբ վերջինս հետաքրքրվում է, թե որ երկրներն են Հայաստանի համար սպառնալիք այսօր:

Տարիներ առաջ, երբ ՔՊ-ն դեռ իշխանության չէր, Հայոց ցեղասպանության ուրացման խնդիր էլ դեռ դրված չէր, ու ՔՊ-ականները, անգամ նախկինում՝ «մինչհեղափոխական» Հայաստանում լուրջ պաշտոններ զբաղեցրած մարդիկ, ինչպիսին է, օրինակ, Անդրանիկ Քոչարյանը: Մի բան է, երբ անհեթեթ, հակահայկական խոսույթ ես լսում «սեՊտեմբեր»-ին «սեԿտեմբեր» ասող ՔՊ-ական պատգամավորից կամ լուրջ դեմքով «իմ կենսագրության մեջ սեր կա» ասող ՔՊ-ականից, լրիվ այլ բան է, երբ դա հնչում է թվացյալ խելացի, ճանապարհ անցած պաշտոնյայից ու պատգամավորից:

Ուրացման ենթակա արժեքների ցուցակը երկար է, այսօր ուզում ենք անդրադառնալ ամենաանթույլատրելի մեկին՝ ցեղասպանության ուրացմանը: Ձեռքիս տակ է հայտնվել տարիներ առաջ՝ «մինչհեղափոխական» Հայաստանում հրատարակված եռահատոր մի ժողովածու՝ ցեղասպանությունը վերապրածների վկայությունների մասին («Հայոց ցեղասպանությունը՝ Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ»), որի նախաբանը գրել է, ոչ ավել, ոչ պակաս՝ ՔՊ-ական իրավաբան, ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Նա, օրինակ, գրել է, որ նման ժողովածուներն իրավական առումով անգնահատելի նշանակություն ունեն: Այս տողերը գրելուց 10-12 տարի անց Վարդանյանը դարձել է մի թիմի անդամ, որոնք լռության են մատնում ցեղասպանության փաստը, ասում են՝ ցեղասպանության ճանաչումը մեր առաջնահերթությունը չէ, ասում են՝ անցյալի ողբերգական էջը պետք է թերթել ու մոռանալ, եւ ցեղասպանության զոհերի ցուցակներ են պահանջում, որպես ապացույց այն բանի, որ ցեղասպանություն եղել է:

2010-ականներին հրատարակված այս գրքի առաջաբանը, որի հեղինակը ՔՊ անդամ Վլադիմիր Վարդանյանն է, վերնագրված է. «Հայոց ցեղասպանությունը վերապրած անձանց շրջանում կազմակերպված փաստահավաք առաքելության արդյունքների արդի իրավական նշանակության մասին», որտեղ հատկապես կարեւորել են 1916 թվականին Հայ հեղափոխական դաշնակցության անցկացրած փաստահավաք աշխատանքները: Այո, սա այն նույն ՔՊ-ականն է, որի թիմն այսօր առավոտից երեկո, բոլոր հնարավոր ու անհնարին հանցագործություններում մեղադրում է Դաշնակցությանը՝ նրան ներկայացնելով որպես ապազգային կառույց: Եվ սա այն ՔՊ-ականն է, որի թիմակից արտգործնախարարը դաշնակցական պատգամավոր Քրիստինե Վարդանյանին օրեր առաջ Հ1-ի տաղավարում ասում էր, որ հենց նա է ամենամեծ ազգային անվտանգության սպառնալիքը Հայաստանի համար, երբ վերջինս հետաքրքրվում է, թե որ երկրներն են Հայաստանի համար սպառնալիք այսօր:

Տարիներ առաջ, երբ ՔՊ-ն դեռ իշխանության չէր, Հայոց ցեղասպանության ուրացման խնդիր էլ դեռ դրված չէր, ու ՔՊ-ականները՝ ուսյալից մինչեւ թերուս, ստիպված չէին մտնել այդ ամոթալի գծի մեջ, իրավաբան Վլադիմիր Վարդանյանն իր առաջաբանում գրում էր, որ սույն ժողովածուում արտացոլված վկայությունները կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության որակման համար իրավական նշանակություն ունեցող փաստեր ապացուցելու համար, որ «վերը նշված ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվությունից զատ, ժողովածուում ամփոփված վկայություններն ունեն չափազանց մեծ նշանակություն՝ Արեւմտյան Հայաստանի եւ Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերի բնակչության, ցեղասպանության ընթացքում զոհվածների, ստացած վնասվածքների հետեւանքով հետագայում մահացածների, վիրավորների, խեղվածների եւ այլ տուժածների թիվը պարզելու համար»:

Հետաքրքիր է՝ իսկ Վլադիմիր Վարդանյանն այս ամենն ասե՞լ է իր թիմակից Անդրանիկ Քոչարյանին, երբ վերջինս ցեղասպանության զոհերի ցուցակներ էր փնտրում: Հետաքրքիր է՝ իսկ Վլադիմիր Վարդանյանին այսօր թույլատրվա՞ծ է «Արեւմտյան Հայաստան» եզրույթն օգտագործել: Ուշագրավ է նաեւ, որ, ի հեճուկս իշխանական շատ ներկայացուցիչների կամ վերջիններիս սատարողների, Վլադիմիր Վարդանյանն այս աշխատությունում հստակորեն ջախջախում է ՔՊ-ական այլ թեզեր եւս՝ գրելով. «Ինքնապաշտպանության դեպքեր տեղի են ունեցել գրեթե բոլոր ցեղասպանությունների ժամանակ, երբ հետապնդվող մարդկային խմբերի հոծ բնակության վայրերում բռնկվել են ապստամբություններ, կամ ինքնապաշտպանական գործողություններ են իրականացվել... Հայոց ցեղասպանության իրագործման տարիներին տեղի ունեցած ինքնապաշտպանության դեպքերը, որոնց մասին բավականին հաճախ է հիշատակվում սույն ժողովածուում զետեղված վկայություններում, որեւէ կերպ չեն կարող ստվերել կամ մթագնել Հայոց ցեղասպանության եղելության փաստը: Ընդհակառակը, նման գործողությունների առկայությունը խմբի հետապնդման լավագույն վկայություններից մեկը կարող է հանդիսանալ»:

Ուղղակի զարմանալի է եւ անգամ անհավանական՝ ինչպես կարող է մարդ ընդամենը 10-15 տարում իրավաբանից, գիտնականից վերածվել խղճուկ կուսակցական քարոզչի, ուրանալ իր ուսանած գիտելիքներն ու համոզմունքները, մասնակցել ակնհայտ հակահայկական թեզերի շրջանառմանը եւ սպասարկել ոչ հայկական շահեր:

Մտորումներ՝ ընտրությունների մասին

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երբ դեռ նախընտրական արշավը նոր-նոր էր սկսվում, մտերիմներիցս մեկի հետ այդ թեմայով կարճ խոսակցություն ունեցա: Մտերիմս, որ Հայաստանում գործող լրագրող է, ասաց. «Կտեսնես, Նիկոլ Փաշինյանը հաղթելու է: Խնդիրը ոչ այնքան իշխանափոխության մեջ է, որքան խորհրդարանում ներկայացված ընդդիմության: Մեծ հաշվով՝ ընդդիմադիր դաշտը նույնիսկ անկեղծորեն հետաքրքրված էլ չէ, որ Նիկոլ Փաշինյանը հեռանա: Կարեւորը՝ խորհրդարանական կամ, ինչպես ասում ենք մեր հոդվածներում՝ տիտղոսակիր ընդդիմության մեջ թարմացում լինի: Կտեսնես, վերջում ամեն բան կհանդարտվի՝ եւ գայլերը կուշտ կլինեն, եւ ոչխարները: Իսկ որոտընդոստ հայրենասիրական-ազգասիրական պայքարն էլ ի վերջո կվերածվի շարքային մանդատակռվի, ինչպես դու ես սիրում ասել, թե ցանկացած սիրամարգի փառահեղ պոչի հետեւում ամենահասարակ հավի հետույք է»:

Շատ քիչ դեպքերում է, որ մասնավոր զրույցները մեջբերում եմ այս ֆորմատով: Այս անգամ որոշեցի մեջբերել, որովհետեւ իրավիճակը գոնե իմ «ծուռ հայացքով» ու գնահատմամբ՝ շատ նման է մտերիմիս՝ ամիսներ առաջ տված գնահատականին: Եթե անկեղծ լինենք, հասկանալի էր, որ կենաց-մահու պայքարի վերածված ընտրական գործընթացում Նիկոլ Փաշինյանն ամեն բան գործադրելու է, իր տիրապետած գործիքակազմը լիարժեք օգտագործելու է, որպեսզի պահպանի իշխանությունն առաջիկա հինգ տարիների ընթացքում: Միայն կամովին հեռանալու ցանկություն ունենալու դեպքում տիրապետած ռեսուրսներդ կխնայես, կթողնես, որ դեմոկրատական, ազատ ու թափանցիկ ընտրություններ լինեն՝ հավասար մրցակցության պայմաններում, այսինքն՝ ինչ-որ բան բաց կթողնես, որ իրադարձություններն ինքնահոսով զարգանան, եւ եթե պարտվես, ապա պատվով կհեռանաս ու կփակես քաղաքական կենսագրության այդ էջը:

Բացի այդ, գուցե շատերն ինձ հետ համաձայն չլինեն, սակայն կա նաեւ արտաքին գործոնը: Միջազգային նախագիծ է կյանքի կոչվելու՝ «Թրամփի ուղու» տեսքով: Հարավային Կովկասում որոշակի վերադասավորումների փուլ է: Ռուսաստանն էլ կարծես թե վերագնահատում է իր առաջնահերթությունները: Իհարկե, չի նշանակում, թե հրաժարվում է Հարավային Կովկասից: Ինչպես Բիսմարկն է ժամանակին ասել՝ «այնտեղ, ուր մտավ ռուս զինվորի սապոգը, էլ դուրս չի գա»: Ու այս պայմաններում Փաշինյանը հստակ հանձնառություններ ստանձնած անձ է: Իսկ հանձնառություն ստանձնած անձի փոփոխությունը սովորաբար բավական ռիսկային է լինում, եւ, բացի այդ, ռեգիոնում շահեր ունեցող «մեծ խաղացողներն» էլ դա թույլ կտան միայն այն դեպքում, եթե, պայմանական ասած՝ փոխարինելու եկողը լինի ավելի լավ հանձնառություններ կատարող, քան նախորդը: Հայաստանում գործող ընդդիմությունն այդպես էլ չկարողացավ այդ առումով գրավել «դրսի «մեծ խաղացողների» ուշադրությունը», չկարողացավ իրեն բրենդավորել որպես «ավելի հարմար փոխարինող», ու նաեւ դրա պատճառով է, որ Հայաստանում իշխանություն չփոխվեց: Գուցե նաեւ չուզեց: Դա էլ չեմ բացառում: Ամեն մարդ չէ, որ պատրաստ է շարունակել մի պրոցես, որի համար կարող է հայտնվել պատմության անողորմ դատաստանի կամ «քավարանի կրակների մեջ»:

Փարիզը՝ համաշխարհային կինոյում

Նորաձեւության մայրաքաղաք Փարիզը համաշխարհային կինոյում ամենաճանաչելի քաղաքներից է: Նրա ճարտարապետությունը, պատմությունը, մշակութային ժառանգությունը եւ անկրկնելի մթնոլորտն ավելի քան հարյուր տարի ոգեշնչել են ռեժիսորներին, սցենարիստներին եւ, իհարկե՝ դերասաններին: Փարիզը համաշխարհային կինոյի գլխավոր սիմվոլներից է, որը գեղեցիկ ֆոն է ապահովում հատկապես ռոմանտիկ կինոժապավենների համար: Մոնմարտրի նեղլիկ փողոցները, Սենայի ափը, գողտրիկ սրճարաններն ու բուլվարները ստեղծում են սիրո եւ ներշնչանքի մթնոլորտ: Ժան-Պյեր Ժյոնեի «Ամելին» այն կինոնկարներից է, որը միլիոնավոր հանդիսատես է ունեցել: «Կեսգիշերը» կինոնկարում Փարիզը հառնում է որպես երազանքների, արվեստի եւ ստեղծարար ներշնչանքի քաղաք: Հերոսը ճամփորդում է ժամանակի միջով եւ հանդիպում հայտնի մշակութային գործիչների հետ, ովքեր ապրել ու գործել են 20-րդ դարում: Դրանով ընդգծվում է Փարիզի՝ որպես համաշխարհային մշակութային կենտրոն լինելու նշանակությունը: Սակայն Ֆրանսիայի մայրաքաղաքը միայն ռոմանտիկայի քաղաք չէ, այն դրամատիկ, պատմական եւ նույնիսկ քրեական իրադարձությունների քաղաք է: «Դա Վինչիի ծածկագիրը», «Նիկիտան» ֆիլմերում Փարիզը դինամիկ մեգապոլիս է, լի առեղծվածներով, սյուժետային անսովոր շրջադարձներով եւ վտանգներով: Փարիզն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հեղինակային կինոյում: Ֆրանսիական «նոր ալիքի» ներկայացուցիչները՝ Ֆրանսուա Տրյուֆոն, Ժան-Լյուք Գոդարը, Փարիզի փողոցները կիրառում են որպես բնական դեկորացիաներ՝ իրենց կինոնկարների համար: Դրա շնորհիվ կինոարվեստը ստանում է նոր գեղարվեստական արտահայտչաձեւեր: Լյումյեր եղբայրներից մինչ այսօր, Փարիզն իր սիմվոլներով՝ Էյֆելյան աշտարակով, Սբ Աստվածամոր տաճարով եւ Լուվրով, շարունակում է առանձնահատուկ նշանակություն ունենալ համաշխարհային կինոյում եւ ներշնչանքի աղբյուր դառնալ նոր ժապավենների համար:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԹԵ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԸ ՉԵՆ ԸՆՏՐՈՒՄ, ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՒՄ

Եթե իշխանությունը գիտի հազարավոր մահացածների առկայության մասին եւ տարիներ շարունակ չի մաքրում ընտրացուցակները, ապա պարտավոր է բացատրել, թե ինչու: Իսկ եթե մահացածների անվան դիմաց հայտնաբերվեն ստորագրություններ, ապա խոսքն արդեն ոչ թե վարչական թերացման, այլ ընտրական հանցագործության մասին է:

Վանաձորի թիվ 8 դպրոցի 23/25 ընտրատեղամասում մի տեսարանի ականատես եղա, որը ոչ միայն զարմացրեց, այլեւ հերթական անգամ ստիպեց մտածել՝ ինչու ոչ մի կերպ չեն ճշգրտվում ընտրացուցակները: Նախ՝ այդ ցուցակները կախված էին այնպիսի բարձրության վրա (2.5-3 մետր), որ դրանք կարդալու համար անպայման հեռադիտակ (թե՞ մանրադիտակ) պիտի տրամադրեին քաղաքացիներին: Մոտեցա տեղամասային հանձնաժողովի քարտուղարին եւ հարցրի. «Արամայիս եւ Ռոզա Անտոնյաններ՝ ընտրողներ կմն ցուցակում»: Սկզբում պատասխանեց. «Իրավունք չունեմ ասել»: Ասացի. «Գուցե ուզում եմ նրանց բերել ընտրատեղամաս: Գուցե ուզում եմ դատարան դիմել եւ վերականգնել նրանց ընտրելու իրավունքը, ինչո՞ւ չեք ասում»: «Բանակցելուց» հետո բացեց ցուցակը՝ ցույց տվեց: Այո՛, անունները կային: Արամայիս Անտոնյանն իմ հայրն է, որը մահացել է 26 տարի առաջ: Ռոզա Անտոնյանն իմ մայրն է, որը մահացել է 7 տարի առաջ: Երկուսն էլ շարունակում էին «ապրել» ընտրացուցակում: Մի՞թե հարցեր չպետք է առաջանան: Եթե պետությունը գիտի մարդու մահվան մասին, եթե տրամադրվում է մահվան վկայական, եթե այդ տեղեկությունը մտնում է պետական գրանցամատյաններ, եթե այն հասնում է պետական կառույցներին, ապա ինչո՞ւ է մարդը շարունակում մնալ ընտրողի կարգավիճակում: Ո՞նչ նպատակով են նրա անունը պահպանում: Ո՞ւմ համար:

Գրող, հրապարակախոս Աշոտ Միրզոյանը գրում է. «Այս իմ լուսահոգի հարեւան՝ հույն Դմիտրի պապիկը վաղուց մահացել է Ուկրաինայում: Բայց դեռ ցուցակում կա»: Դերասանուհի Արսինե Նավասարդյանը հրապարակավ հայտարարել է, որ ընտրացուցակում հայտնաբերել է իր հարազատի անունը, որը մահացել է 25 տարի առաջ: Սոցիալական ցանցերում եւս նման վկայությունները բազմաթիվ են: Քաղաքացիները տարիներ առաջ մահացած հարազատների անունները հայտնաբերել են ընտրողների պաշտոնական ցուցակներում: Տարբեր տարիներին խոսվել է հարյուր-հազարավոր նման դեպքերի մասին: Այսինքն՝ խնդիրը գոյություն ունի: Հարցն այն է, թե ինչ չափերի է հասնում:

Երեկոյան, երբ քվեարկությունն արդեն ավարտվել էր, կրկին դիմեցի նույն տեղամասի հանձնաժողովի նախագահին: Խնդրեցի ցույց տալ՝ արդյոք իմ ծնողների անվան դիմաց ստորագրություն կա՞, արդյոք նրանք «մասնակցե՞լ» են ընտրությանը: Պատասխանը նույնն էր. «Չենք կարող ցույց տալ: Օրենքն արգելում է»: Հարցրի. «Ո՞ր օրենքը»: Հստակ պատասխան չստացա: Գուցե իսկապես կա՞ նման իրավական սահմանափակում, բայց այդ դեպքում քաղաքացին իրավունք ունի ստանալ նաեւ հստակ բացատրություն, որովհետեւ այստեղ արդեն հարցը միայն իմ ծնողների մասին չէ:

Իհարկե, փաստը, որ մահացած մարդու անունը կա ընտրացուցակում, դեռ ինքնին չի ապացուցում ընտրակեղծիք: Բայց այն ստեղծում է ընտրակեղծիքի հնարավորություն: Ժողովրդավարական ընտրակարգը պետք է ոչ միայն ազնիվ լինի, այլեւ բացառի կեղծիքի հնարավորությունները: Եթե ցուցակում կան մահացածներ, ապա առաջանում են բնական հարցեր. արդյո՞ք նրանց անվան դիմաց ստորագրություններ կան, արդյո՞ք նրանց անուններով քվեարկություն է արձանագրվել: Եթե ոչ՝ հասարակությունը պետք է դա տեսնի եւ համոզվի: Եթե այո՝ իրավապահ մարմինները պարտավոր են զբաղվել դրանով: Հենց այստեղ ծագում է ամենակարեւոր քաղաքական հարցը՝ ո՞ւմ է ձեռնտու ընտրացուցակներում հազարավոր մահացածների անունների առկայությունը: Եթե տարիներ շարունակ իշխանությունն է տնօրինում պետական համակարգը, ստանում է մահվան վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, վերահսկում է համապատասխան կառույցների աշխատանքը, բայց չի ապահովում ընտրացուցակների լիարժեք մաքրումը, ապա հասարակությունն իրավունք ունի հարցնելու՝ ինչո՞ւ: Եթե մահացածների անունները շարունակում են մնալ ցուցակներում, ինչո՞ւ որեւէ մեկը պատասխանատվություն չի կրում:

Հետեւաբար ընդդիմությունը, դիտորդները, լրագրողները եւ քաղաքացիական հասարակությունը պետք է պահանջեն մեկ պարզ բան. վերստուգել, զտել, ճշգրտել ընտրացուցակները: Ստուգել, թե քանի մահացած քաղաքացի է մնացել ցուցակներում, նրանց անվան դիմաց ստորագրություններ կմն, թե՞ ոչ, եւ ինչու է տարիներ շարունակ նույն խնդիրը կրկնվում: Եթե մարդը մահացել է 26 տարի առաջ եւ շարունակում է համարվել ընտրող, ապա ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ցուցակներում առկա մյուս միլիոնավոր տվյալներն անթերի են:

Ուզում եմ հիշեցնել տարիներ առաջ Գյումրիում տարածված այն դառը հումորը, որը ծնվել էր հենց նման երեւույթներից. «Հայրս, մայրս գերեզմանից եկել, ընտրություններին մասնակցել են, հետո առանց տուն մտնելու հետ են գնացել...»: Եթե այսօր էլ քաղաքացիները շարունակում են իրենց մահացած հարազատների անունները գտնել ընտրացուցակներում, ապա այս կատակն արդեն պարզապես հումոր չէ, այլ՝ հանրային անվստահության արտահայտություն, ընտրական պրոցեսները ստվերող հանգամանք: Այն պահից, երբ քաղաքացին սկսում է կասկածել ընտրողի գոյությանը, սկսում է կասկածել նաեւ ընտրության արդյունքին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՐԱՐԱՏԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՐ «ԻՆՔՆՈՒԹԵՆԱԿԱՆ ՕՐՈՐՈՑ»

Նախնիների հողից կտրված՝ սփյուռքում ապրող մարդու համար հայրենիքն աշխարհագրական տարածք չէ սոսկ: Իրական լեռներին, լճերին եւ գետերին փոխարինելու են գալիս դրանց պատկերները՝ արտացոլված երգերում, ավանդություններում, ընտանեկան ծիսակատարություններում: Այդպես առաջանում է ինքնության այն բարդ համակարգը, որն ազգին ազգ է դարձնում եւ կոչվում է «վտարանդի անձի հայրենիք»:

Հայկական սփյուռքն աշխարհում գոյություն ունեցողների մեջ ամենամեծերից եւ կենսունակներից է: Հայկական սփյուռքի փորձառությունը ցույց է տալիս, որ հարյուր տարի առաջ իրենց նախնիների հողը թողած ազգի շառավիղների գիտակցության մեջ այն շարունակում է ապրել: Նույնիսկ նրանց, ովքեր այդ հայրենիքը երբեք չեն տեսել իրենց աչքով: Ժիլ Դելյոզն ու Ֆելիքս Գվաթարին զարգացրել են երկրափիլիսոփայական ուսմունք՝ սահմանելով լանդշաֆտի մետաֆիզիկան՝ որպես մարդու ինքնության ձեւավորման ակտիվ գործոն: Այս ուսմունքի համաձայն, հայ ազգի ինքնութենականության ձեւավորման ակտիվ բաղադրիչներից է հատկապես Արարատ լեռը: Այն, ըստ Էդմունդ Գուսերլի տեսության, մեզ համար օրորոց է, որտեղ ծնունդ ենք առել մենք՝ որպես ազգ, որպես հավաքականություն, եւ դա մեր գիտակցության մեջ է ամրագրված: Արարատը մեզ համար «նախատապան» է՝ առանցքային հիմնաքար, որի վրա կառուցվում է մեր ինքնությունը: Հայաստանում ապրողի համար ասվածը անհասկանալի թվա, որովհետեւ հայաստանցու ոտքերի տակ հայկական հողն է, նա լրացուցիչ սիմվոլների կարիք չպետք է ունենար, եթե չլինեին ՔՊ-ական իշխանության՝ Արարատին ուղղված ոտնձգությունները: Սակայն սփյուռքում ապրողի համար հայրենիքն առաջին հերթին Արարատ սարն է՝ որպես նյութական հիմք: Հայրենիքը նաեւ լեզուն է, մշակույթը, հավատքը, հայկական դուդուկի մեղեդին, այն ամենը, որն օրորոցից մինչեւ գերեզման մեզ որպես հայ ուղեկցում է, ձեւավորում է հայի ինքնությունը, դաստիարակում ու պահում ժամանակի մեջ:

Ի դեպ, միայն մենք՝ հայերս չէ, որ նման «օրորոց» ունենք: Հրեաների համար դա Երուսաղեմն է, Ձիթենյաց լեռը, Լացի Պատը: Որեւէ հրեայի համար Երուսաղեմն այն առանցքն է, որի շուրջ նրա համար պտտվում է ողջ տիեզերքը: Իռլանդացիներն էլ իրենց «ինքնութենական օրորոցն» ունեն, ճապոնացիները՝ իրենց, արգենտինացիները՝ իրենց: Ու ֆիզիկապես իռլանդացին Իռլանդիայից դուրս, ճապոնացին՝ Ճապոնիայից դուրս... ապրելով՝ այդ «ինքնութենական օրորոցը» միշտ պահում է իր կողքին, իր աչքի առաջ, ինչպես մենք Արարատ սարը: Ոչ միայն պահում է, այլեւ դրանց նկատմամբ որեւէ ոտնձգություն չի հանդուրժում, ոտնձգություն նախաձեռնողներին պատժում է:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԱՂՎԵՍԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ ՊՈՂԸ ՊԵՏՔ Է ԿՏՐԵԼ

Լրատվամիջոցներից մեկում ահազանգ կար, որ Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը ՔՊ շրջանակներում հայտարարել է, թե իր գյուղում՝ Նորապատում, «Ուժեղ Հայաստան»-ը ձայն չի հավաքելու, քանի որ բոլորին հանձնարարված է դուրս հանել թիվ 3 քվեաթերթիկը: Այստեղ երեւում է աղվեսի գունազարդ պոչը: Ընդդիմությունը կարծես ամբողջովին անտեսել է այս վտանգավոր հնարքը:

Ահա թե ինչպես կարող էր գործել այդ մեխանիզմը: Ընտրողը մտնում է քվեախցիկ: Նրա մոտ են բոլոր քվեաթերթիկները: Ընտրում է մեկը, դնում ծրարի մեջ, իսկ մյուսները, ըստ կարգի, թողնում է քվեախցիկում գտնվող աղբարկղում: Բայց ինչն է խանգարում, որ ընտրողը չօգտագործված քվեաթերթիկներից մեկը դնի գրպանը կամ պայուսակի մեջ եւ դուրս բերի ընտրատեղամասից: Եթե որեւէ կուսակցություն կամ շահագրգիռ խումբ ցանկանար համոզվել, որ ընտրողը կատարել է իրեն թելադրված ընտրությունը, ապա բավական էր հանձնարարել դուրս բերել որոշակի համարի քվեաթերթիկը: Այդ դուրս բերված քվեաթերթիկը կարող էր դառնալ ապացույց, որ տվյալ անձը չի ընտրել այն քաղաքական ուժին, որի քվեաթերթիկը դուրս է բերել իր հետ: Չօգտագործված քվեաթերթիկները մնում են քվեախցիկում: Սակայն բավական էր, որ դրանցից մեկը դուրս բերվեր, որպեսզի հաշվետվություն, ապացույց ներկայացներ պատվիրատունին, որ ինքը կատարել է իրեն տրված հանձնարարությունը: Իհարկե, մի փոքր հնարամիտ ընտրողը կարող էր քվեախցիկում տրցակով դրված քվեաթերթիկներից ընտրել ու իր հետ տանել ուրիշների թողած՝ անհրաժեշտ թերթիկը, բայց կարող էին նաեւ հրահանգը սրբորեն կատարել:

Չեմ պնդում, թե նման մեխանիզմը կիրառվել է, կարծում եմ՝ նման հրահանգն ավելի շատ հոգեբանական ազդեցություն է թողնում, մարդիկ նաեւ կաշկանդվածություն ունեն, թե կիմանան, կտեսնեն, կպարզեն իր քվեարկության բնույթը: Անգրագետ մարդն ավելի հեշտ է ենթարկվում նման մանիպուլյացիաների: Ավելին՝ կարծում եմ, որ նման պատվեր տեսականորեն կարող էր տալ ցանկացած քաղաքական ուժ, բայց պարզ է, որ ամենամեծ «կազմակերպչական» հնարավորությունները, ամենապղտոր մտքերն ու կեղծելու հակվածությունը սովորաբար ունենում է գործող իշխանությունը: Իշխող կուսակցությունն է տնօրինում պետական լծակները, գտնվում է առավել ուժեղ դիրքում, ունի ավելի լայն ազդեցության հնարավորություններ, այլ ուժերի ապօրինությունները հայտնաբերելու լծակներ: Մանավանդ՝ այժմ տեսնում ենք, թե ինչքան կեղծ գործեր են հարուցվում, մինչդեռ ամեն քայլափոխի հօգուտ իշխանության ապօրինություններ են տեղի ունենում, բայց ձերբակալվում-կալանավորվում են բացառապես ընդդիմության ներկայացուցիչները:

Իսկ կարելի՞ է կանխել նման վտանգները: Իմ կարծիքով՝ այո: Ընդդիմությունը, դիտորդները եւ ընտրական գործընթացի մասնակիցները պետք է նկատեին նման դրսեւորումները եւ աղմուկ բարձրացնեին: Պետք է պահանջեին այնպիսի վերահսկողություն, որը կբացառեր քվեախցիկից որեւէ քվեաթերթիկի դուրսբերումը: Նախ, կարող էին պահանջել, որ յուրաքանչյուր ընտրող իր հետ քվեախցիկից դուրս բերեր չօգտագործված քվեաթերթիկները, բոլորի ներկայությամբ հաշվեին ու նետեին աղբարկղ: Կարող էին այս ընթացքում զտել, մաքրել ընտրացուցակները՝ գոնե մահացած մարդկանց անուններից: Կարող էին միասնական քվեարկության բանկ ստեղծել, որ նույն անձը հանրապետության մեկ այլ ընտրատեղամասում չկարողանար կրկնաքվեարկություն անել՝ համակարգը թույլ չտար եւ այլն, եւ այլն: Որոշ ընտրախախտումներ կատարվում են ոչ թե այն պատճառով, որ հնարավոր է դրանք թաքցնել, այլ՝ այն, որ հետո գրեթե անհնար է դառնում դրանք ապացուցելը: Ժողովրդավարական ընտրակարգում կարեւոր է ոչ միայն արդար ընտրությունը, այլեւ այնպիսի ընթացակարգերը, որոնք բացառում են կասկածի առաջացումը: Ընտրությունների որակի գլխավոր չափանիշը ոչ թե իշխանության հայտարարություններն են, այլ կեղծիքի հնարավորությունների նվազագույն մակարդակը:

Սակայն կա մի հարց եւս, որի պատասխանն ապագայում ստիպված են լինելու տալ նաեւ նրանք, ովքեր մասնակցել են նման գործողությունների: Եթե մարդը շահի դիմաց նպաստել է ընտրության աղավաղմանը, ապա վաղ թե ուշ բախվելու է դրա հետեւանքներին: Անարդար ձեւավորված իշխանությունը չի վնասում միայն քաղաքական մրցակիցներին. վնասում է ամբողջ հասարակությանը, այդ թվում՝ հենց նրանց, ովքեր օգնել են այդ անարդարության կայացմանը: Երբ երկիրը շեղվում է զարգացման ճանապարհից, երբ խորանում են տնտեսական, սոցիալական եւ բարոյական խնդիրները, այդ հետեւանքներից ոչ ոք չի կարող խուսափել: Կանցնի ժամանակ, եւ մի օր, հավանաբար, ոմանք ցավով կհիշեն իրենց մասնակցությունը եւ կհասկանան, որ իրենց կարճաժամկետ գրոշանոց շահը վեր են դասել պետության ապագայի հանդեպ գործած վնասից: Կեղծված ընտրության գինը վերջում վճարում են բոլորը՝ նույնիսկ նրանք, ովքեր մասնակցել են կեղծիքին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 9.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵԹԵ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Եթե Նիկոլի օրոք դեմոկրատիան մի հրաշքով հասնի այն մակարդակին, որ Հայաստանում ընտրելու իրավունք ստանան նաեւ կենդանիները, ապա կարող եք չկասկածել, որ Հայաստանի Հանրապետության իշխանություններն ամեն ինչ կանեն, որ ստանան նաեւ կենդանական աշխարհի ձայները: Ինչպե՞ս…

Ասվածը դիտարկենք խոզերի օրինակով: Դիցուք, այս դեպքում ՀՀ առողջապահության նախարարը խոզերի սոցիալական վիճակի բարելավման մի օրինագիծ է պատրաստում եւ բերում խորհրդարան: Խորհրդարանը՝ իմա իշխող մեծամասնությունը, «տուտ ժե», ՀՀ-ում խոզերի կյանքի հանգամանքներն ուսումնասիրող մի քննիչ հանձնաժողով է ստեղծում, աջ եւ ահյակ հարցաքննում բոլոր շահագրգիռ կողմերին, ապա քննարկումներ սկսում Անահիտ Ավանեսյանի ներկայացրած օրինագծի շուրջ: Հիմնական զեկուցող է նշանակվում Անահիտ Ավանեսյանի տեղակալը, ու հարցը բերվում է ԱԺ լիագումար նիստ: Հասկանալի է, չէ՞, թե այդ ընթացքում ինչպիսի ոգեւորություն է առաջ գալիս ՀՀ խոզաբուծական հաստատություններում… Վերջապես, մենք էլ ուշադրության արժանացանք, ապրի՜ Նիկոլը:

Օրինագծի դրույթներն այնքան էլ շատ չեն, բայց դրանք ուղղված են մեկ նպատակի՝ այնպես անել, որ ընտրելու իրավունք ստացած խոզերը հաջորդ ընտրություններում քվեարկեն Նիկոլ Փաշինյանի, այն է՝ իշխող ուժի օգտին: Դե իսկ դրա համար շատ խելք պետք չէ: Ընդամենը քթի ծակ է պետք, մի քիչ էլ՝ խորամանկություն:

Եվ այսպես, առաջին կետով կհայտարարեն, որ Հայաստանի Հանրապետությունում արգելվում է խոզի միս ուտելը… Ապագա կա՛մ… Կգոռան խոզերը: ՔՊ-ից, բնականաբար, կբարեփոխեն այդ կետը՝ շարադրանքին ավելացնելով հետեւյալ տողերը՝ «կարգազանցները կտուգանվեն մորթված խոզի շուկայական արժեքի 500-ապատիկի չափով»: Խոզերն այստեղ լրիվ կհաբռգեն՝ բա խի՞ նախկիններ վախտ խոզ մորթողներին չէին տուգանում… Կեցցե Նիկոլը, Նիկո՛ղ, մեր արեւ, Նիկո՛ղ, մեր կյանք…:

Ընդդիմությունը, որ նախապես հումորով է վերաբերվում այս նախագծին ու հրաժարվում մասնակցել քննարկումներին, մեկ էլ ողջ կազմով գալիս է ԱԺ, որ ՔՊ-ին քննադատի այս հիմարության համար… Նիկոլը ո՞նց կարա խոզի խորովածն արգելի, ախր, նա խոզի խորովածի համար հայրենիքն էլ կծախի… Եվ խոզերը կսկսեն դժգոհել ընդդիմությունից՝ արա բայց ի՜նչ նախանձ եք դուք, չեք ուզում մեզ մի փոքր արեւ դիպչի…

Ստեղծված իրավիճակից անմիջապես կօգտվի Նիկոլը եւ երկու հավելյալ դրույթ կամրագրի, այսպես կոչված, «խոզերի օրինագծում».

1. Արգելել ուղիղ եթերում խոզ խանձելը եւ 2. Արգելել նախընտրական լայվերում խանձած խոզի կաշին ձեռքերով պատառոտելն ու լափելը:

Ոգեւորված ՔՊ-ն նոր բարեփոխում կառաջարկի՝ «կարգազանցները կտուգանվեն խանձած եւ կաշվահան արված խոզի շուկայական արժեքի 500-ապատիկի չափով»: Հիմնական զեկուցողն էլ իր հերթին կաշվից դուրս կգա, որ օրինագծում ամրապնդվի եւս մեկ դրույթ՝ խոզերի սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Նա, հավանաբար, կառաջարկի ապագա օրենքում ամրապնդել այն թեզը, որ խոզաբուծարանների տերը խոզերն են, «ծիպա»՝ դու ես տերը քո բուծարանի: Վստահ եղեք, որ սա հավասարապես հավանության կարժանանա թե ԱԺ մեծամասնության եւ թե բուն խոզերի կողմից:

Օրինագծի առաջին ընթերցումն այսքանով կավարտվի, եւ այն կգնա երկրորդ ընթերցում, ապա՝ քվեարկության: Հաստատ չեմ կարող ասել՝ ընդդիմությունը կմասնակցի այդ քվեարկությանը, թե մի ուրիշ բան կանի, բայց եթե ես լինեի խորհրդարանում նրանց փոխարեն, հաստատ կողմ կքվեարկեի այս նախագծին: Ինչո՞ւ… Զարմանալի մարդիկ եք, այ մարդ, ինչո՞ւ կողմ չքվեարկեմ, եթե արդեն իսկ պարզ է, որ խոզերը դեմոկրատական ազատությունների շրջանակում քվեարկելու իրավունք են ստացել: Մի քիչ էլ պետք է ապագա ընտրությունների մասին մտածել, չէ՞: Եթե Նիկոլն այսօր 50 տոկոսից ավելի է խփում՝ առանց իր «խոզեղբայրների» ձայների, դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչ տոկոսներ կստանա, եթե ողջ գլխաքանակով ընտրության գնան նաեւ խոզերը: Այն էլ ասեմ, որ խոզերը վերջինը չեն, որ կարող են ընտրելու իրավունք ստանալ: Նրանք կարող են իրենց հետեւից ընտրության տանել ոչխարներին, այծերին, սագերին, անգամ՝ ավանակներին ու ձիերին: Դուք չե՞ք կարդացել «Անասնաֆերման», չգիտե՞ք, թե ինչի են ընդունակ խոզերը, երբ ագարակատերը հիմար հարբեցողի մեկն է լինում:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am